

ՄԱՐԶԻԿ

հսլս

مارزیک

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

33րԴ ՏԱՐԻ, 2014, ԹԻԻ 5-7 (383-385) - VOL. XXXIII № 5 - 7 السنة الثالثة والثلاثون - العدد رقم 5 - 7





Միացեալ այս թիւին նուէրը ընթերցողներուն՝
Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումին որմագիր:

ՄԻԱՅԵԱԿ

ԱՅՍ ԹԻԻԸ

■ Խմբագրական	2
■ Անդրադարձ	4
■ Բացումը	6
■ Յարգանքի Տուրք	12
■ «Բազմամշակութային Օր»	16
■ ճանաչողություն	18
■ Հիւրեր	22
■ Այցելություններ	24
■ Խրախճանք	28
■ Բանակին Հետ, Հայրենիքին Համար	32
■ Արագածն Արարատ	40
■ Սկաուտական Հմտություններ	44
■ Փակումը	48
■ «Արարատեան Կարգ»	54
■ Արձագանգ	58
■ Բանակավայրի Բացումը	60
■ Պատգամներ	64
■ Ակնարկ	76
■ Լուսանկարչական Անդրադարձ	78
Սելֆիի սերունդը - Ուրախ ժամանց - Չարքաչ ժամանց - Սկաուտ են, սկաուտ - Ոսպնեակին դիմաց - Խարոյկին շուրջ - Հայրենի երկինքի տակ - Թիշրթներու լեզուով - Բնութեան գիրկը	
■ Հաղորդագրություն	96
■ Մասնակիցներ	96
■ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ Բանակումի Քայլերգ	97



Մարզական ամսաթերթ
Հրատարակություն՝
Հ.Մ.Ը.Մ.ի
Կեդրոնական Վարչություն

33-րդ ՏԱՐԻ, 2014, ԹԻԻ 5-7 (383-385)

ԽՄԲԱԳԻՐ

Վիգեն Աւագեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Սեւան Նազարեան (Ֆրանսա),
Սեդա Պէշլեան-Սաղապազարեան,
Մարո Քէշիշեան (Արեւմտեան
Մ. Նահանգներ), Յակոբ
Խաչատուրեան (Արեւելեան
Մ. Նահանգներ), Տիրան
Շահինեան (Գանատա), Ռազմիկ
Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Գրիգորիս Պողարեան
Պատրիկ Կիւլպէնկեան
Աբօ Մոսիկեան

ԹԵՔՆԻԲ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Էջադրում - Արշօ Պալեան
Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
Colour Separation - Photogravure Paklayan
Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ՀԱՍՅԷ

Պուրճ Համուտ, Նոր Մարաշ
«Սեւան» Շէնք, Գ. Յարկ
Հեռ: 00961 1 248043, 260117
E-mail: marzig@homenetmen.org
P.O. Box: 80486 B. Hammoud,
Lebanon

Marzig

SPORTS MAGAZINE

ՏՐԻՈՒՄ-ՎԱՃԱՌՔ

Լիբանանի մէջ թերթին
ցրումը կը կատարուի
յատուկ ցրուիչով (71 239209):
Տարեկան բաժանորդագրութեան
սակ ձշդուած է՝ Լիբանան \$32
Միջին Արեւելեան եւ
Եւրոպական երկիրներ \$70,
Մ. Նահանգներ եւ Աւստրալիա \$75

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթը ուղղակի Լիբանանէն
կը ստացուի անձնական
բաժանորդագրութեամբ:
Լիբանանէն դուրս թերթին
բաժանորդագրութիւնը
կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի
եւ Շրջանային Վարչութիւնները:



ԳԵՐԱԳՈՅՆ ԻՏԷԱԼԸ

2 014-ի ամառը բեղուն եւ արդինաշատ եղաւ Հ.Մ.Ը.Մ.ին համար. «Արարատեան» կարգի կազմակերպում, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումի իրագործում, Սփիւռքի նախարարութեան հետ գործակցութեան յուշագիրի ստորագրութիւն, Բիւրականի ընդլայնուած ու վերանորոգուած բանակավայրի բացում, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Բագրատ Եսայեանի Համաշխարհային ըսկաուտական Շարժումի Բիւրոյի անդամ ընտրութիւն եւ այլն:

Սովորական իրադարձութիւններ չեն ասոնք: Իւրաքանչիւրը առանձինն շատ բան ունի թելադրելիք մեր ժողովուրդին ընդհանրապէս եւ Հ.Մ.Ը.Մ.ին յատկապէս: Երկարաշունչ ծրագրումի եւ նոյնքան երկարատեւ աշխատանքի արդիւնք են անոնք: Հաւաքական ծիգով իրագործուած, հաւատաւոր միութեանականներու ճակտի քրտինքով կերտուած: Պետական տարողութեամբ աշխատանք մը, արդարեւ, առանց սակայն պետական միջոցներու՝ «Կամաւոր բանակ»ով եւ անսահման նուիրաբերումի դրամագլուխով:

«Արարատեան» կարգը կը նպատակադրէր սկաուտական պատասխանատու անձնակազմ պատրաստել սփիւռքեան թէ հայրենի մեր միաւորներուն համար: Հեռանկարային աշխատանք էր, շնորհակա՛լ իրագործում, որուն բարիքներէն պիտի օգտուին միութեան աշխարհասփիւռ շարքերը, ո՛ր երկինքի տակ ալ գտնուին անոնք: «Արարատեան»ի տղաքն ու աղջիկները, անտարակոյս, նոր հորիզոններ պիտի բանան միութեան սկաուտական աշխատանքներուն դիմաց՝ քայլ մը աւելի արդիականացնելով եւ կատարելագործելով զանոնք:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումը միութեան բովանդակ ընտանիքը համախմբող նախաձեռնութիւն մըն էր, որ սկաուտական շարքերը անմիջական հաղորդակցութեան մէջ կը դնէր հայրենի ժողովուրդին, աշխարհագրութեան եւ պատմութեան հետ: Տասը օրեր շարունակ, Հ.Մ.Ը.Մ.ական մատղաշ սերունդի ներկայացուցիչներ Արագածի լանջերէն կը յայտնաբերէին հայրենիքը, կը յայտնաբերէին իրենց ազգային արմատները, ինքնութիւնը, դիմագիծը եւ կ'ամրապնդէին հաւաքականութեան մը պատկանելիութեան գիտակցութիւնը: Անոնք կը դադրէին հայեր ըլլալէ, կը դառնային հայութիւն, մէ՛կ ամբողջութիւն, ի խնդիր մէ՛կ նպատակի:

Մէկ հայութեան պատկանելիութեան այդ զգացումն էր, որ բանակողները կը մղէր աննախընթաց քայլով մը այցելելու զինուորական հիւանդանոց եւ բարի ապաքինում մաղթելու սահմանային ճակատներու վրայ վիրաւորուած հայ զինուորներուն: Նոյն զգացումն էր, որ բանակողները կ'առաջնորդէր Հայաստանի զինուորական վարժարան եւ իրենց զօրակցութիւնը յայտնել հայկական քաջարի բանակին: Իսկ արդէօք նոյն զգացումը չէ՞ր, որ սկաուտները կը տանէր եռաբլուր եւ Ծիծեռնակաբերդ՝ յարգանքի տուրք ընծայելու հայութեան եւ Հայաստանին համար զոհուած մեր անմեռ նահատակներու յիշատակին:

Ազգային խանդավառութեան եւ գօտեպնդման առիթ էր համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումը, բայց նաեւ՝ պատգամներով հարուստ նախաձեռնութիւն մըն էր ան: Աւելի քան 700 սկաուտ համախմբող բանակումը յստակ պատգամներ կ'ուղղէր բոլորին, թէ հայրենիքը՝ Հայաստանը, որքան ալ քաղաքական, ընկերային թէ տնտեսական դժ-



ւարութիւններ դիմագրաւ,- իսկ ո՞ր երկիրը այսօր դժ-
ւարութիւններ չի դիմագրաւեր,- չի կրնար օտարա-
նալ մեզմէ: Հայրենիքը մերն է, մենք հայրենիքին ենք:
Կարելի չէ դասալիք ըլլալ հայրենիքէն, այնքան
ատեն որ մեր արմատները խրած են անոր մէջ:
Հայրենիքը աղբիւրն է մեր բոլորին հզօրութեան,
երաշխիքը մեր յաւերժութեան եւ արտայայտիչը մեր
ամբողջականութեան:

Այս մօտեցումով պէտք է ողջունել բանակումի
օրերուն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ ըՍ-
փիւռքի նախարարութեան միջեւ ստորագրուած յու-
շագիրը, որ անմիջական արտայայտութիւնը կը հան-
դիսանայ Սփիւռք-Հայաստան ամբողջականութեան
ամրապնդման: Իբրեւ հաւատքի եւ խանդավառու-
թեան միութիւն, Հ.Մ.Ը.Մ. այս յուշագիրով կ'ընդունի,
որ հայրենիքը կը զարգանայ ու կը զօրանայ իր բոլոր
զաւակներուն աշխատանքով միայն, իսկ հայութիւնը
իր ինքնութիւնը կը պահէ եւ ազգային միասնակա-
նութիւնը կ'ամրապնդէ Հայաստանով միայն: Առ այդ,
ան իր պատրաստակամութիւնը կը յայտնէ մասնակե-
ցելու հայրենի նոր սերունդի առողջ դաստիարակու-
թեան եւ քաղաքացիական կրթութեան գործին:

Հ.Մ.Ը.Մ.ի պատրաստակամութիւնը, սակայն, ինք-
նին բաւարար պիտի չըլլար, եթէ անոր տրամադրու-
թեան տակ չըլլային անհրաժեշտ կարելիութիւնները՝
նպատակադրուած գործը յաջողցնելու համար:
Եւ ի՞նչ այդ նպատակին կը ծառայէ Հ.Մ.Ը.Մ.ի ընդլայ-
նուած եւ բարեկարգուած նոր բանակավայրը, որ
տրամադրուած ու վերաշինուած է Հայաստանի պե-
տութեան եւ «Փիւնիկ» մարդկային պաշարներու
հիմնադրամին կողմէ: Իր տեսակին մէջ եզակի բանա-
կավայր մը ամբողջ Կովկասի մէջ, ինչ որ արդիական

իր յարմարութիւններով միջազգային սկաուտու-
թեան ուշադրութիւնը կը գրաւէ եւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաու-
տութեան վարկն ու հեղինակութիւնը կը բարձրացնէ:

Բիւրականի արդիական նոր բանակավայրը բա-
րենիչ մըն է հայ սկաուտութեան համար, այնպէս ինչ-
պէս բարենիչ է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան
անդամ եղբ. Բագրատ Եսայեանի ընտրութիւնը Հա-
մաշխարհային Սկաուտական Շարժումի ամենէն հե-
ղինակաւոր դիրքին՝ Շարժումի Բիւրոյին, ինչ որ ան-
նախընթաց երեւոյթ է միութեան մէկ դարեայ պատ-
մութեան մէջ:

Այս բոլորը ցուցանիչը կը հանդիսանան այն իրո-
ղութեան, որ Հ.Մ.Ը.Մ. այսօր, բոլոր ժամանակներէ
աւելի, կը մնայ հայ երիտասարդութեան մեծագոյն
միութիւնը, որ տարիներու իր փորձառութեամբ, իր
հմայքին ու վայելած լայն ժողովրդականութեան ան-
փոխարինելի հարստութեամբ, կ'ընթանայ հետեւ-
ողական յաջողութեան ճամբով: Ան չի բաւարարուի
անցեալի իրագործումներով: Իր անհամար յաղթա-
նակներուն գինովութիւնը չ'ապրիր ան: Փառաւոր
յաղթանակներու անցեալ մը ունի Հ.Մ.Ը.Մ.: Սակայն
յաղթանակներէն աւելի, յաղթանակներէն անդին, ան
կը ձգտի իր առաքելութեան հաւատարիմ մնալու գե-
րագոյն իտեալին՝

Որպէսզի հայոց հայրենիքը մնայ միշտ ամուր եւ
հզօր, որպէսզի հայութիւնը մնայ միշտ կենսալից ու
առողջ,

Ի խնդիր մեր ազգային բոլոր տենչերուն իրակա-
նացման,

Եւ մեր պատմական բոլոր իրաւունքներուն վերա-
կանգնման:



Լուսանկարները՝
Գաբրիել Փանոսեանի

Հ.Մ.Ը.Մ. ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱԳԻՐ ՄԸ ԿԸ ՍՏՈՐԱԳՐԷ ՍՓԻՒՌԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Կիրակի, 3 Օգոստոսի կէսօրին, Հ.Մ.Ը.Մ. գործակցութեան յուշագիր մը ստորագրեց Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի նախարարութեան հետ:

Ստորագրութեան արարողութիւնը տեղի ունեցաւ նախարարութեան կեդրոնատեղիին մէջ, Երեւան, պաշտօնական հանդիպումով մը, որուն ներկայ գտնուեցան նախարար Հրանոյշ Յակոբեան, նախարարութեան տարբեր բաժանմունքներու պատասխանատու ղէմքեր եւ Հ.Մ.Ը.Մ.ական բազմաճիւղային պատուիրակութիւն մը, բաղկացած՝ կեդրոնական Վարչութեան ինը անդամներէ եւ «Մարգիկ» պաշտօնատնօրէնի խմբագիրէն:

Հանդիպումին ընթացքին նախարար Հրանոյշ Յակոբեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան արտասանեցին խօսքեր եւ շեշտեցին Հայաստան-Սփիւռք գործակցութեան

ամրապնդման ու ընդլայնման անհրաժեշտութիւնը: Նախարար Յակոբեան իր խօսքին մէջ մեծապէս գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի դերը հայ երիտասարդութեան ներգրաւման եւ ազգային դաստիարակութեան գործին մէջ: Այս առիթով ան փոխանցեց հայրենի պետութեան պատրաստակամութիւնը աջակցելու հայրենիքի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի իրականացնելիք ծրագիրներուն:

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական կառույցին եւ սկստակական թէ մարզական մարզերուն մէջ կատարած լայնածաւալ աշխատանքներուն: Ան շնորհակալութիւն յայտնեց նախարար Յակոբեանին՝ հայրենի պետութեան կողմէ Հ.Մ.Ը.Մ.ի Բիւրականի բանակավայրին կից նոր

հողաշերտի մը յատկացման եւ արդիական բանակավայրի մը կառուցման համար:

Պաշտօնական խօսքերէն ետք տեղի ունեցաւ ազգային հրատապ հարցերու քննարկում-զրոյց: Նախարար Յակոբեան Հ.Մ.Ը.Մ.ի պատասխանատուներուն հետ արծարծեց Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի նախապատրաստութիւններուն, հայախօսութեան նահանջի երեւոյթին եւ առ-



հասարակ նոր սերունդին հայեցի դաստիարակութեան վերաբերող հարցեր:

Աւարտին, նախարար Հրանոյշ Յակոբեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Գառնիկ Մկրտիչեան ստորագրեցին գործակցութեան յուշագիր մը, որ կ'առաջադրէ Հայաստան-Սփիւռք գործակցութեան զարգացման հեռանկարները եւ կ'ընդգծէ հայ երիտասարդութեան դերակատարութեան եւ մասնակցութեան բարձրացումն ու ընդլայնումը, մարզամշակութային, կրթադաստիարակչական եւ ազգային ծրագիրներու իրականացումը:



ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 10-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻ ԱԻԱՐՏԻՆ՝

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՅՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻՆ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումին աւարտէն օր մը ետք, Երկուշաբթի, 11 Օգոստոսին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներէ բաղկացած պատուիրակութիւն մը այցելեց Հայաստանի վարչապետ Յովիկ Աբրահամեանին:



Վարչապետը հիւրերը ողջունելով բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի դերը հայապահպանման աշխատանքներու մէջ եւ հայրենի կառավարութեան անունով պատրաստակամութիւն յայտնեց աջակցելու իւրաքանչիւր ողջմիտ առաջարկի գործադրութեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անունով ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան վարչապետ Յովիկ Աբրահամեանին ներկայացուց Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումին ընթացքը եւ նշեց, որ բանակումը 17 երկիրներէ համախումբեց 720 սկաուտներ՝ հայրենիքին ծանօթանալու, սկաուտական գիտելիքներ ամբարելու եւ փոխանակելու նպատակով:

Իր խօսքին մէջ, ատենապետ եղբ. Մկրտիչեան շնորհակալութիւն յայտնեց վարչապետին՝ կազմակերպութեան աջակցելու պատրաստակամութեան համար:

ԵՂԲ. ԲԱԳՐԱՏ ԵՍԱՅԵԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ԱՆԴԱՄ

11-14 Օգոստոսին տեղի ունեցաւ Համաշխարհային Սկաուտական Կոմիտէի ընդհանուր ժողովը եւ կոմիտէի նոր կազմի ընտրութիւնը, որուն իբրեւ արդիւնք՝ Հ.Մ.Ը.Մ.ական մը նուաճեց սկաուտական համաշխարհային բարձրագոյն հեղինակութիւնը նկատուող կոմիտէի անդամակցութեան իրաւունքը:



Սլովենիոյ մէջ գումարած այս ժողովին մասնակցեցան չորս Հ.Մ.Ը.Մ.ականներ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Բագրատ Եսայեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետ եղբ. Օշին Փիրումեան, Լիբանանի սկաուտական ֆետերասիո-



նէն եղբ. Վաչէ Նաճարեան եւ Արժանթինի սկաուտական ֆետերասիոնէն քոյր Սեդա Սեֆերեան:

Ժողովի աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ աննախընթաց երեւոյթով մը, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Բագրատ Եսայեան ընտրուեցաւ նորընտիր կոմիտէի անդամ:



Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումները պատմության մէջ առաջին անգամ ըլլալով, 10-րդ ընդհանուր բանակումը ունեցաւ բացման երկու հանդիսութիւն՝ ներքին եւ արտաքին, Բիւրականի եւ Երեւանի մէջ:

Բացման զոյգ հանդիսութիւնները տեղի ունեցան 31 Յուլիսին, մարաթոնային օրով մը, որ սկիզբ առաւ առաւօտեան ժամը 10:00-ին եւ աւարտին հասաւ երեկոյեան 10:00-ին: Բացման զոյգ հանդիսութիւններուն միջեւ, բանակումին խմբապետական կազմը Եւրոպայի մէջ յարգանքի իր տուրքը ընծայեց Արցախեան ազատամարտի նահատակներուն, իսկ ուշ երեկոյեան՝ բանակումի ընդհանուր կազմը այցելեց Ծիծեռնակաբերդ եւ ոգեկոչեց Հայկական Յեղասպանութեան մէկուկէս միլիոն նահատակներու անմեռ յիշատակը (Այս մասին տեսնել էջ 12-15):

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 10-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ԲԱՅՈՒՄԸ ԱՐԱԳԱԾԷՆ ԱՐԱՐԱՏ՝ ՄԵՐ ԴԱՏԻՆ ՏԵՐԸ ԸԼԼԱՈՒԹ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՄԲ

ԲԻՒՐԱԿԱՆԻ ՄԷՋ
 Հինգշաբթի, 31 Յուլիսի առաւօտեան կանուխ ժամերէն սկսեալ, Բիւրականի ընդարձակուած եւ վերանորոգուած բանակավայրը ստացաւ մեղուի փեթակի տեսք: Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհասփիւռ ընտանիքի 17 շրջաններէն ժամանած աւելի քան 700 սկաուտներ տենդազին պատրաստութիւններով բանակավայրը վերածեցին Հ.Մ.Ը.Մ.ական իսկական դարբնոցի, ուր բոլորը նոյնացան Արագածէն Արարատ նոյն դատին տէրը ըլլալու յանձնառութեամբ:

Յետմիջօրէի ժամը 3:00-ին, բանակումին ազդանշանը տրուեցաւ պաշտօնական տողանցքով եւ բացման հանդի-





սուլթեամբ, որուն ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամներ եւ Համաշխարհային Սկաուտական Շարժումի եւրոասիական բաժանմունքի ընդհանուր քարտուղար Եուրի Եմիլիան:

Իրօշակի արարողութենէն եւ քայլերգներու կատարումէն ետք, բանակողներուն ողջոյնի խօսքեր փոխանցեցին Եուրի Եմիլիան, բանակումի ընդհանուր խմբագրատեղք եղբ. Վաչէ Նաճարեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վար-



Վերանորոգել (խօսքերը տեսնել առանձին):

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Բանակումի բացման ներքին հանդիսութենէն քանի մը ժամ ետք, երեկոյեան ժամը 7:00-ին, Երեւանի մէջ տեղի ունեցաւ բացման հրապարակային մեծաշուք հանդիսութիւնը՝ ներկայութեամբ Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգէն Սարգսեանի, Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանի, երիտասարդութեան եւ

ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 10-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ

(ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԲԱՅՄԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ԵՐԵՒԱՆԻ «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ» ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ)

Սիրելի բարեկամներ, Սրբանց շնորհաւորում եմ ձեզ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան 10-րդ յոբելեանական բանակումի կապակցութեամբ: Ողջունում եմ աշխարհի փասնեօք պետութիւններից Հայաստան ժամանած աւելի քան եօթ հարիւր մասնակիցներին:



Ուրախալի է, որ շուրջ մէկ դարեայ պայմանքան ընթացքում արդէն վեցերորդ անգամ Հ.Մ.Ը.Մ-ի ընդհանուր բանակումն անցկացում է հայրենիքում: Վստահ եմ, որ այս յագեցած օրերին ձեռք կը բերէք նոր ընկերներ, կը ծանօթանաք հայրենիքի պայմանաշարային արժէքներին ու առաւել կը սիրէք պետականութիւնը վերականգնած ազաւոր անկախ Հայաստանը: Համոզուած եմ, որ այս միջոցառումը կը համախմբի հայաստանաբնակ եւ սփիւռքահայ հարիւրաւոր երիտասարդների եւ կը նպաստի Հայաստան-Սփիւռք կապերի սերտացմանն ու ամրապնդմանը:

Մէկ անգամ եւս շնորհաւորում եմ Հ.Մ.Ը.Մ-ի 10-րդ ընդհանուր բանակումի մեկնարկի կապակցութեամբ եւ մաղթում արդիւնաւէտ ընթացք:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ

մարմնակրթութեան նախարար Գաբրիէլ Ղազարեանի, Գանատայի ընկերային գարգացման եւ բազմամշակութային հարցերու նախարար Ճէյսըն Քենիի, Երեւանի փոխ քաղաքապետ Արամ Սուքիասեանի, Ազգային ժողովի պատգամաւոր Կարէն Աւագեանի, Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն մարմնի անդամ Լիլիթ Գալստեանի, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամներու, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ատենապետ եղբ. Օշին Փիրումեանի, Հայաստանի արտաքին գործոց նախարար-



ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՈՒ ԹԻՒԸ՝ ՄԵԾԱԳՈՅՆԸ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու պատմութեան մեծագոյն թիւը ունեցաւ 10-րդ բանակումը, որուն մասնակիցներուն թիւը հասաւ 727-ի, պատասխանատուներու եւ բանակողներու հետեւեալ պատկերով.-

Կեդրոնական Վարչութիւն 1
Բանակումի գործադիր մարմին 9
Բանակումի օժանդակ մարմին 29
Անձնակազմ 6

Արեւելեան Մ. Ն. 100
Արեւմտեան Մ. Ն. 97
Գանատա 99
Հարաւային Ամերիկա 38
Հայաստան 42
Լիբանան 84
Սուրիա 6
Քուէթ 20
Ամման 14
Պաղտատ 13
Երուսաղէմ 24
Աւստրալիա 20
Յունաստան 10
Ֆրանսա 22
Լոնտոն 41
Ալմէլօ 11
Իրանի Հայ Մշակութային «Արարատ»
Կազմակերպութիւն եւ «Սիփան», «Նայիրի» միութիւններ 38
Ուքրանիոյ ազգային սկաուտութիւն 2
Մոլտաւիոյ ազգային սկաուտութիւն 1

րութեան Սփիւռքի բաժանմունքի պետին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչին:

Բանակումը ընթացք առաւ «Ազատութեան» հրապարակէն դէպի «Հանրապետութեան» հրապարակ սկաուտական տողանցքով, առաջնորդութեամբ Հայաստանի պաշտպանու-



թեան նախարարութեան շեփորախումբին: Անոր հետեւեցան բանակումին մասնակից Հ.Մ.Ը.Մ.ական պատուիրակութիւնները, Թեհրանի «Արարատ», «Նայիրի», «Սիփան», Նոր Զուղայի «Արարատ» միութիւններու սկաուտական կազմերը եւ բանակումին հիւրաբար մասնակցող Ուքրանիոյ եւ Մոլտաւիոյ ազգային սկաուտական կազմակերպութիւններու ներկայացուցիչները:

Հրապարակ հասնելով, բանակողները դիմաւորուեցան ներկաներու բուռն

ծափերով: Տեղի ունեցաւ պաշտօնական հանդիսութիւն, ուր խօսքեր արտասանեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացուցիչը, Հայաստանի նախագահին ներկայացուցիչը, հայրենի եւ

Գանատայի նախարարները, Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն մարմինի անդամը, Հ.Մ.Ը.Մ.ի





Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Բագրատ Եսայեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետ եղբ. Օշին Փիրումեան եւ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Վաչէ Նաճարեան (գլխաւոր խօսքերը տեսնել առանձին):

Հանդիսութիւնը աւարտեցաւ երեկոյեան ժամը 8:00-ին, որմէ ետք սկսուտական պատուիրակութիւնները յիշատակի նկարներով հրաժեշտ տուին «Հանրապետութեան» հրապարակին՝ յիշատակելի եւ տպաւորիչ պահեր ապրած ըլլալու գոհունակութեամբ:



ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ԼՐԱՏՈՒՆ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումը ունեցաւ իր հայերէն լրատուն, որ առօրեայ դրութեամբ պատրաստուեցաւ եւ պատի թերթի ճամբով ներկայացուեցաւ բանակող սկաուտներուն:

Լրատուին խմբագրութիւնը կատարեցին քոյրեր Նանէ Մանասեան եւ Մարինէ Յարութիւնեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի անդամներ:

Լրատուն բաղկացաւ չորս էջէ եւ ընդգրկեց բանակումին յայտագիրները, լուրերը, այցելութիւններու նկարները եւ սկաուտական երգիծանկարներ:



ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ԵՌԱՔԼՈՒՐԻ ԵՒ ԾԻԾԵՌՆԱԿԱՔԵՐԴԻ ՄԷՋ

Համա-Հ.Մ.Լ.Մ.ական 10-րդ բանակումի Բիւրականի բացման հանդիսությունէն ետք, Հինգշաբթի, 31 Յուլիսի յետմիջօրէին, ժամակումին խմբապետական կազմն ու պատուիրակութիւններու պատասխանատուները, Հ.Մ.Լ.Մ.ի

Կեդրոնական Վարչութեան անդամներուն առաջնորդութեամբ, այցելեցին Եռաբլուր եւ յարգանքի իրենց տուրքը մատուցեցին Արցախեան ազատամարտի նահատակներուն: Հ.Մ.Լ.Մ.ական պատուիրակութիւնը Եռաբլուրի մէջ ոգեկոչեց յիշատակը անոնց, որոնք իմացեալ մահուան

ուղիով ընթացան, հայրենիքի ու հայրութեան նահատակները դարձան, իրենց արժանի տեղը գրաւելով մեր հաւաքական յիշողութեան եւ պատմութեան մէջ: Անոնք՝ նահատակները դարբնեցին մեր ապագան, դարձան մնայուն փարոս՝ դէպի ամբողջական Հայաստան մեր երթը լուսաւորող:

Հ.Մ.Լ.Մ. այդ երթին համար տուած է քանի մը նահատակ: Երկուքը՝ Կեդրոնական Վարչութեան անդամ Վարդան Բախշեան եւ Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի նախկին սկաուտ եւ հեծելանւոր Վիգէն Զաքարեան հանգչած են Եռաբլուրի մէջ: Անոնց յիշատակը անմեռ կը մնայ իւրաքանչիւր Հ.Մ.Լ.Մ.ականի մօտ: Արդարեւ, անցնող 20 տարինե-





րուն, չէ պատահած համա-Հ.Մ.-
Լ.Մ.ական նախաձեռնություն մը,
որուն մասնակիցները այցելած չրլյան
Բախչեանի եւ Զաքարեանի շիրիմները
եւ յարգանքի տուրք ընծայած չրլյան
անոնց: Համա-Հ.Մ.-Լ.Մ.ական այս բա-
նակումը տարբեր չէր կրնար ըլլալ իր
նախորդներէն:

Ու տարբեր չեղաւ: Հ.Մ.-Լ.Մ.ի Կեդ-
րոնական Վարչութեան եւ համա-Հ.Մ.-
Լ.Մ.ական 10-րդ բանակումի ընդհա-
նուր կազմին անունով ծաղկեպսակներ
գետեղուեցան Վարդան Բախչեանի եւ
Վիգէն Զաքարեանի շիրիմներուն:
Հնչեցին «Յառաջ նահատակ»ը եւ «Վէր-
քերով լի»ն:

Երաբար չի կրնար տալէ առաջ,

Հ.Մ.-Լ.Մ.ի պատուիրակները յար-
գանքի ծաղկեպսակով մը խոնարհեցաւ
մեր ազատագրական պայքարի բոլոր
նահատակները ոգեկոչող յիշատակի
պատին առջեւ:

ԾԻԾԵՌՆԱԿԱՔԵՐԴԻ ՄԷՋ

Նոյն օրը, ուշ երեկոյեան, բանակու-
մին բացման Երեւանի պաշտօնական
հանդիսութենէն ետք, բանակողներու
ընդհանուր կազմը, աւելի քան 720
սկաուտներ, ուղղուեցան Ծիծեռնակա-
բերդ եւ մոմավառութեամբ յարգանքի
իրենց տուրքը ընծայեցին Հայոց Յեղա-
սանութեան մէկուկէս միլիոն նահա-
տակներու յիշատակին: Ծիծեռնակա-
բերդի անմար կրակին շուրջ տեղի ունե-

ցաւ հոգեհանգստեան պաշտօն: Ծաղ-
կեպսակներ գետեղուեցան Հ.Մ.-Լ.Մ.ի
Կեդրոնական Վարչութեան եւ բանա-
կումի խմբապետական կազմին կողմէ:

Այցելութիւնը եղաւ տպաւորիչ ու
ազդեցիկ: Առաջին անգամ ըլլալով
Հ.Մ.-Լ.Մ. գիշերային մթութեան մէջ
կ'այցելէր հայոց նահատակներու պան-
թէոն: Բոլորը կ'ունկնդրէին լուսութեան
ձայնը, զուսպ եւ ինքնամոլիփ: Շատե-
րու այտերուն վրայ արցունք կար, աչ-
քերուն մէջ՝ պոռթկում ու գայլոյթ:
Լուռ էին բոլորը, պահանջատէր էին
ամէնքը:

Խորհրդաւոր պահուն լուսութիւնը
խցեցին «Յառաջ նահատակ»ն ու «Կի-
րիկիա»ն:





«ԲԱԶՄԱՄՇՆԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐ»ՈՒԱՆ ՍՏԵՂԾԱԾ ԽԱՆԴԱՎԱԹՈՒԹԻՒՆԸ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումին երկրորդ օրը՝ Ուրբաթ, 1 Օգոստոսը յատկանշուեցաւ «Բազմամշակութային օր»ուան կազմակերպութեամբ: Այդ օր բանակումին մասնակից 18 երկիրներու պատուիրակութիւնները հանդէս եկան իրենց երկիրներու սովորութիւնները, տարազներն ու մշակութիւնները ներկայացնող տաղաւարներով: Խանդավառութիւնը մեծ եղաւ ընդ որ տաղաւարներուն շուրջ: Երգը, պարը, նուագն ու ազգային ճաշերը յաւելեալ «համ ու հոտ» տուին օրուան: Անկասկած, մեծազոյն հետաքրքրութիւնը ստեղծեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի տաղաւարը, որ հարազատ հայկականութիւն ներշնչեց ընդ յոյն:

Այս էջերով ներկայացուած նկարները խօսուն վկայութիւններ կը փոխանցեն ստեղծուած խանդավառութեան:





ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԲԱՆԱԿՈՂՆԵՐՈՒ ԷԶՄԻԱԾԻՆ ԵՒ

Շաբաթ, 2 Օգոստոսը յիշատակելի օր մը եղաւ համա-Հ.Մ.Ը.Մ-ական 10-րդ բանակումի մասնակիցներուն համար, որոնք եզակի առիթը ունեցան Էջմիածին եւ Սարգարապատ այցելութեամբ ճանչնալու իրենց պատմութիւնն ու ինքնութիւնը:

Հայ հաւատքի եւ գոյատեւման խորհրդանիշները հանդիսացող զոյգ ուխտավայրերը մեծ ազդեցութիւն գործեցին սկստներու վրայ, որոնք Էջմիածնի ու Սարգարապատի մէջ գօտեպնդուեցան իրենց հայկականութեամբ, զօրացան իրենց Հ.Մ.Ը.Մ-ականութեամբ, իբրեւ ազգային աւանդներու պահպան միութեան մը անդամներ:



ԵՒ ԻՆՔՆՈՒԹԻՒՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ

ԵՐԵՒԱՆԻ Մէջ
Կէսօրէ առաջ, բանակողները ազատ ժամեր անցուցին Երեւանի մէջ: Առանձին պատուիրակութիւններով անոնք այցելեցին մայրաքաղաքի նշանաւոր թանգարանները, տեսարժան վայրերը եւ ժողովրդային շուկան՝ Վերնիսափը: Աւարտին, բոլորին ժամադրավայրը դարձաւ «Հանրապետութեան» հրապարակը, ուր Երեւանեան տաքէն եւ շրջապայթեցնէն յոգնած սկստները պահ մը հանգչեցան ու զովացան պատմութեան թանգարանի շուքին տակ:


ԷԶՄԻԱԾԻՆ ԵՒ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ
Յետմիջօրէին, բանակողները այցելեցին Ս. Էջմիածին եւ ծանօթացան դարաւոր վանքի պատմական բաժիններուն:





Վանքի շրջափակին մէջ, բանակողները ընդունեց Գէորգեան Ճեմարանի տեսուչ Գէորգ Եպս. Սարոյեան: Տէրունական աղօթքէն ետք, սրբազանը բարի գալուստ մաղթեց Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտներուն եւ անոնց փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին ողջոյնները: Բանակումին խմբապետական կազմը, իր կարգին, Գէորգ Եպս. Սարոյեանին փոխանցեց յուշանուէր մը:

Ապա, բանակողները այցելեցին հայ ժողովուրդի վերապրումի խորհրդանիշ Մարդարապատի յուշահամալիրը, ուր յարգանքի իրենց տուրքը ընծայեցին Մայիսեան հանրապետութեան կերտիչներուն: Մարդարապատի գեղակերտ գանգակատան առջեւ 720 սկաուտներ հնչեցուցին «Մարդարապատ»-ն ու «Յառաջ նահատակ»-ը եւ ազգային բարձր տրամադրութիւններով վերադարձան բանակավայր, ուր ընդունեցին Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանը (տեսնել էջ22-23):




Շաբաթ, 2 Օգոստոսի երեկոյեան, համա-Հ.Մ.-Ը.Մ.ական բանակումի մասնակիցներուն այցելեց եւ իր պատգամը փոխանցեց Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան:

Բանակավայր հասնելով, Մարգարեան դիմաւորուեցաւ Հ.Մ.-Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Կարպիս Գապասագալեանի, Կարպիս Թովմասեանի, Վիգէն Դաւթեանի, Հրաչ Մեսրոպեանի եւ Բագրատ Նսայեանի կողմէ:

Կեդրոնական Վարչութեան եւ բա-

նակումի խմբապետական կազմին հետ կարճ զրոյցէ մը ետք, Հրանդ Մարգարեան ներկայ գտնուեցաւ օրուան խորուհահանդէսին, ուր արտասանեց պատգամ մը:

Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչը իր պատգամին մէջ յայտնեց, որ հայրենիքի աջակցութեան գործին դերակատար պէտք է ըլլայ իւրաքանչիւր հայ, աշխարհի ո՛ր անկիւնն ալ որ ապրի: Եթէ մենք հայ ժողովուրդին մաս կը կազմենք, կը նշանակէ թէ ունինք իրաւունքներ եւ պարտականութիւններ: Եթէ պատասխանատուութիւն կայ, նաեւ աշխատանք կայ: Դուք Հայ Մարմ-



նակրթական Ընդհանուր Միութեան ճամբով կը կերտէք այդ ճակատագիրը, եւ ես անոր համար շատ ուրախ եմ, յայտնեց Մարգարեան:

Շարունակելով, ան նկատել տուաւ, որ տարբեր երկիրներէ հայ երիտասարդութիւն հայրենիքի մէջ համախմբուած է այն ժամանակ, երբ սահմանին վրայ անհանգստութիւն կայ: Ամէն պահ կը փորձեն մեզմէ զոհեր խլել, տակաւին Հայաստանը պատերազմի մէջ է, եւ մեզ պատերազմ կը պարտադրեն: Մենք կրնանք բոլոր դժուարութիւնները յաղթահարել իբրեւ համաշխարհային ազգ: Մեր ուժերը չեն սահմանափակուիր միայն Հայաստանով, մենք ուժեղ ենք ամբողջ աշխարհի տարածքին:

Բանակողներուն ուղղուած իր պատգամին մէջ, Մարգարեան նշեց նաեւ, որ հայրենիքը ծնողքի նման է, եւ ծնողքի նկատմամբ պատասխանատուութեան զգացումով պէտք է վերաբերիլ հայրենիքին հետ, եւ այդ մէկը պէտք է պայմանաւորել ծնողքի որակային յատկա-



ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՁԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐ ՊԷՏՔ Է ԸԼԼԱՅ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՀԱՅ

ԿԸ ՀԱՍՏԱՏԷ Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ ԲԱՆԱԿՈՂՆԵՐՈՒՆ ՈՒՂՂՈՒԱԾ ԻՐ ՊԱՏԳԱՄԻՆ ՄԷՁ

նիչներով: Մեր պետութիւնը կրնայ շատ-շատ թերութիւններ ունենալ, մեր մէջ շատ սխալներ կրնան ըլլալ: Անոր համար պէտք է պայքարինք եւ շտկենք, բայց ոչ մէկ բան կրնայ պատճառ ըլլալ, որ մենք մեր հայրենիքին երես դարձնենք, ոչ մէկ պատճառ կրնայ ըլլալ, որ մենք պատասխանատու չըլլանք մեր երկրի ապագային համար: Մեր ժողովուրդի նկատմամբ ա՛յս գիտակցութիւնն է, որ մեզի պէտք է ուղեկցի, շեշտեց Հրանդ Մարգարեան:

Պատգամին աւարտին, եղբ. Կարպիս Գապասագալեան Հ.Մ.-Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անունով Հրանդ Մարգարեանը պատուեց յատուկ յուշանուէրով, իսկ բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Վաչէ Նաճարեան պատգամախօս հիւրին փոխանցեց բանակումին փողկապը:





«ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ, ԴՈՒ ՄԵՐ ԿԱՐՕՏՆ ԵՍ...»

Սկառուականի կողքին, համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումը ունեցաւ Հայաստան աշխարհի ծանօթացման օրերը: Պատուիրակութիւնները, շրջան առ շրջան, փոքրաթիւ խումբերով այցելեցին պատմական վանքեր եւ ծանօթացան հայրենի երկրի ազգային, մշակութային եւ հոգեւոր յուշակոթողներուն:

Երկուշաբթի, 30 օգոստոսին, յիշատակելի եղաւ բանակումի ամբողջ կազմին այցելութիւնը «քաղցրիկ Սեւան»: Սկառուներ Սեւանայ լիճ հասնելով, բարձրացան թերակղզին, աղօթեցին ու մտմ վառեցին Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ապա լիճին չքնաղ գեղեցկութիւնը վայելելով՝ հրաժեշտ տուին անոր խմբային նկարներով: Այնուհետեւ, անոնք այցելեցին Այրիվանք, որ մօտակայ լճափին բազմած ճարտարապետական գողտրիկ կառույց մըն է:



Պատուիրակութիւններու շրջապատոյտները կատարուեցան երկու օր-ւան ընթացքին եւ ունեցան հիմնական չորս ուղղութիւն:-

Ա. Մուղնի - Օշական - Սաղմոսավանք - Գարբի - Օհանավանք - Այրուբենի այգի

Բ. Գառնի - Գեղարդ

Գ. Խոր Վիրապ - Նորավանք

Դ. Հաղբատ - Սանահին

Կ'արժէ նշել, որ համա-Հ.Մ.-Ը.Մ.ական ամէն բանակումի նման, այս բանակումին եւս, Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի սկաուտները, գեղեցիկ եւ դաստիարակիչ սովորութեամբ մը, Խոր Վիրապի մօտ, Արարատի վեհանիստ շուքին տակ, երդում կատարեցին իրենց միութեան ճամբով ծառայելու հայութեան եւ Հայաստանին:





ԵՐԳ ՈՒ ՊԱՐ, Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՑՆԾՈՒԹԻՒՄ

ԲԱՆԱԿՈՂՆԵՐԸ ԸՆԹՐԻՔԻ ՀԻՒՐԸ Կ'ԸԼԼԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումը յատկանշող երեւոյթներէն մէկը հանդիսացաւ սկաուտական խրախճանքը, որ տեղի ունեցաւ Երեքշաբթի, 5 Օգոստոսի երեկոյեան, երբ բանակումի ամբողջ կազմը ընթրիքի հիւրը եղաւ Հայաստանի Ազգային Ողիմպիական Կոմիտէի նախագահ Գաղիկ Ծառուկեանի:

Երկու տարի առաջ, նմանօրինակ հրաւերի մը ընդառաջած էին համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերու մասնակիցները, որոնք ազգային ոգեւորութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ական խանդավառութեան անմոռանալի պահեր անցուցած էին միասնաբար:

Այժմ կարգը սկաուտներուն հետ, բանակումի ընթացիկ յայտագիրներէն դուրս, պահ մը հայկական քէֆ կատարելու, ազգային համադամ ուտելիքներով հիւրընկալուելու, երգելու եւ պարելու համար:

Խրախճանքը տեղի ունեցաւ Արովեան քաղաքի «Փարաւոն» ճաշարանային համալիրին մէջ, ներկայութեամբ աւելի քան 700 սկաուտներու, բանակումի խմբապետական կազմի անդամներու, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչներու եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ ի վարչական քոյր-եղբայրներու:

Ազգային Ողիմպիական Կոմիտէի նախագահ Գաղիկ Ծառուկեան երկրէն





բացակայ ըլլալով, ողջունի եւ բարի գալուստի բարեմաղթութիւնները ներկաներուն փոխանցեց տեսերիզի արձանագրեալ խօսքով մը:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական վարչութեան խօսքը փոխանցեց եւ ներկայ սկաուտները խրախուսեց Կեդրոնական վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան շեշտեց միասնաբար հայրենի հողին վրայ ըլլալու իրողութիւնը եւ թելադրեց զինուիլ հողին ուժով, Հ.Մ.Ը.Մ-ի գաղափարականով եւ տեսլականով, բանակումէն վերագործին ազգային-միութենական ծառայութեան նոր աւիշ ներարկելու համար մեր շրջաններուն ու գաղութներուն:

Իր խօսքին աւարտին, եղբ. Մկրտիչեան Ազգային Ողիմպիական Կոմիտէի նախագահին յուշանուէրը յանձնեց Կոմիտէի ներկայացուցիչ Հրաչ Ռուստամեանին:

Այնուհետեւ, ընթացք առաւ խրախուսեալը՝ երգով ու պարով: Այդ երեկոյ երգեցին ու պարեցին բոլորը: Ոմանք շրջանակ կազմած, ուրիշներ հին ու նոր ծանօթներով, շատերն ալ անծանօթներով: Բայց չէ՛ որ բոլորն ալ սկաուտներ էին, քոյր-եղբայր իրարու: Ի՛նչ տարբերութիւն եթէ գանատահայր պարէր արժանթինահայուն հետ, պաղտատահայր

Փրանսահայուն հետ, լիբանանահայր հոյանտահայուն հետ: Հ.Մ.Ը.Մ- կը քանդէր բոլոր պատուարները, կը միացնէր սրտերն ու հոգիները, որոնք թունդ-թունդ կ'ելլէին մերթ ազգագրական-տոհմիկ պարերով, իսկ մերթ ալ ազգային-յեղափոխական երգերով:

Այդ օր քէֆը հայկական էր, պատական էր:

Խանդավառութիւնը սկաուտական էր, Հ.Մ.Ը.Մ-ական էր:

Յաղթանակը բոլորինն էր, հայութեան եւ Հայաստանինն էր:





**ԲԱՆԱԿՈՂՆԵՐ
Կ՝ԱՅՑԵԼԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ
ՎԻՐԱԿՈՐՆԵՐՈՒՆ
ԵՒ ԿԸ ՏՈՂԱՆՑԵՆ
Ի ՊԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ**

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակում ծրագրված 8-րդ օրը՝ Հինգշաբթի, 7 Օգոստոսը, նուիրուեցաւ հայկական բանակին: Կէսօրէ առաջ, բանակումի մասնակից պատւիրակութիւններու ներկայացուցիչները, բանակումի գործադիր խմբապե-



**«ԿԱՄԱՒՈՐ ԲԱՆԱԿ»Ը
ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԿՈՂՔԻՆ**

տութեան ընկերակցութեամբ, այցելեցին կեդրոնական զինուորական հիւանդանոց եւ բարի ապաքինում մաղթեցին շաբաթ մը առաջ, հայ-ազրպէյճանական սահմանային բախումներու ընթացքին վիրաւորուած հայ զինուորներուն: Այս առիթով, անոնք զինուորներուն նուիրեցին բանակումի փողկապներ ու թի-շըրթներ: Միաժամանակ, զօրակցութեան գործնական քայլով մը, անոնք արհեստագիտական սարքեր (համակարգիչներ, լուսանկարչական եւ այլ գործիքներ) նուիրե-





ցին բանակի Վանաձորի գործառնոցին, որ շաբաթ մը առաջ տուած էր նահատակ մը:

Յետմիջօրէին, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումի ընդհանուր կազմը, 720 սկաուտներ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներու առաջնորդութեամբ, այցելեցին «Վազգէն Սարգսեան»ի անուան գինուորական ուսումնարան եւ ամբողջ ժամ մը շրջեցան ուսումնարանին տարբեր դասարանները, ուր ծանօթացան հայկական բանակի դաստիարակչական ծրագիրին եւ մարզումի ձեւերուն: Ապա, ուսումնարանի շրջափակը հաւաքուելով, սկաուտներ ընդունեցին Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը: Շրջափակին մէջ տեղի ունեցաւ տողանցք եւ խօսքերու փոխանցում: Տողանցքը առաջնորդեց Հայաստանի պաշտպանութեան բանակի շեփորախումբը: Բանակի մասնախտուկ ուժերը եւ ցուցադրական պատուոյ գունդը յաւելեալ փայլք մը տուին տողանցքին:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան հանդէս եկաւ ողջոյնի խօսքով մը եւ յայտնեց, որ տարիներու եւ սերունդներու երազ մը կ'իրականանայ սկաուտական շարքերու հայկական բանակի գինուորական ուսումնարան այցելութեամբ: «Բանակ եւ գինուորական ուսումնարան խորհրդանիշներ են հայկական պետականութեան, անկա-

խութեան եւ գերիշխանութեան: Իսկ Հ.Մ.Ը.Մ. եղած է ու կը մնայ մնայուն պաշտպանը հայրենի պետականութեան, անկախութեան եւ գերիշխանութեան», նշեց ան:

Շարունակելով, եղբ. Մկրտիչեան հաստատեց, որ ինչ ալ լլլան պայմանները, Հ.Մ.Ը.Մ.ի համար հայոց պետականութիւնը կը մնայ միակ ապակէնը մեր գոյատեւման, իսկ հայոց բանակը կը հանդիսանայ հիմնական պաշտպանն ու երաշխիքը այդ գոյատեւման:

«Մենք հզօր ենք, երբ մեր բանակը հզօր է: Մենք անպարտելի ենք, երբ մեր բանակը համահայկական ուշադրութեան առարկայ դարձուցած ենք: Հա-

յոց բանակը մեր փառքն է ու մեր պատիւը: Հայոց բանակը մեր հպարտութիւնն է ու մեր արժանապատուութիւնը», յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը եւ իր խօսքը եզրափակեց ըսելով. «Այսօր, «կամաւոր բանակը» կանգնած է կողքին պետական բանակին: Իսկ կա՞յ աւելի գեղեցիկ պատկեր՝ քան համա-Հ.Մ.Ը.Մ.ական, համահայկական այս գորակցութիւնը, որ այս պահուն կը պարզուի մեր աչքերուն դիմաց: Այստեղ ներկայ սկաուտներու ճամբով ամբողջ հայութիւնն է, որ այսօր յարգանքի իր տուրքը կու տայ հայոց բանակի նուիրեալներուն, որոնք կը մնան միշտ

արթուն, միշտ խրոխտ ու անձնագոհ, որպէսզի հայրենիքի սահմանները մնան ապահով, իսկ զաւակները՝ պաշտպանուած»:

Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը բանակումի մասնակիցներուն անունով յուշանուէրով մը պատուեց պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը, իսկ բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Վաչէ Նաճարեան բանակումի փողկապները յանձնեց պաշտպանութեան նախարարին եւ «Վազգէն Սարգսեան» գինուորական ուսումնարանի պետ զօր. Մարթին Կարապետեանին:

Այնուհետեւ խօսք առաւ Հայաստանի պաշտպանութեան նախարարը եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումի մասնակիցները ողջունելով յայտնեց, որ Սփիւռքի մշակութային եւ մարզական միութիւնները բացառիկ աւանդունին հայապահպանման գործին մէջ: Արդէն մէկ դարէ ի վեր այդ շնորհակալ առաքելութիւնը կ'իրագործէ Հ.Մ.Ը.Մ.ը՝ հոգեւոր կամուրջ դառնալով աւելի քան 20 երկիրներու 100-է աւելի մասնաճիւղերու 25 հազար անդամներով:

Իր խօսքին մէջ, նախարար Օհանեան նշեց, որ պատմական ճակատագրի բերումով սփռուած ենք ամբողջ աշխարհի մէջ, բայց միացած ենք հայ լեզուով, Հայաստանով, Արցախով ու հայկական բանակով: «Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանը, Հ.Մ.Ը.Մ.ա-





կաններու հոգեկրած գաղափարներն ու նպատակները հարազատ են մեզի՝ գինուորականներուս, քանի որ բանակի ծառայութեան ոգին, կամքն ու մարմինը կոփելու, հայրենիքը ճանչնալու եւ անմոռացորդ սիրելու հանրագումարն է», շեշտեց նախարար Օհանեան:

Հայկական բանակի դիմագրաւած մարտահրաւէրներուն անդրադառնալով, պաշտպանութեան նախարարը շեշտեց, որ «Հայկական բանակը ի զօրու է արգիլելու հայ ժողովուրդը պատուհասած սարսափելի անցեալի կրկնութիւնը: Հայկական բանակին զսպիչ գործողութիւններուն շնորհիւ վերջին օրերուն սահմանային լարուածութիւնը բաւական մեղմացաւ, եւ, այսօր, Հայաստանի ռազմաքաղաքական դեկլարութեան ջանքերուն շնորհիւ ընդհանուր պատերազմի հիմք չկայ»:

Նախարար Օհանեան իր խօսքը փակեց շեշտելով, որ «Հայկական բանակն է հայ ժողովուրդի ամենահզօր ու անպարտելի դաշնակիցը»: Խօսքէն ետք, նախարարը իր կարգին յուշանուէր մը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական վարչութեան:

Խօսքերուն յաջորդեց տողանցքը: Պաշտպանութեան նախարարութեան շեփորախումբին առաջնորդութեամբ նախ տողանցեցին Հ.Մ.Ը.Մ-ի պատուիրակութիւնները, ապա՝ հայկական բանակի մասնաշաղկատուկ ուժերը: Տողանցողները

պատուոյ թրիպիւնին առջեւէն անցնելով բարեւեցին պաշտպանութեան նախարարին ու Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական վարչութեան անդամներուն՝ արժանանալով բոլորին ծափահարութեան:

Տողանցքէն ետք, Հ.Մ.Ը.Մ-ի ըսկաուտներուն ի պատիւ ցուցադրական ներկայացումներ կատարեցին նախարարութեան պատուոյ գունդն ու մասնաշաղկատուկ ուժերը: Աւարտին, նախարարութեան երգչախումբը ի պատիւ սկաուտներուն ներկայացուց ազգային-հայրենասիրական շարք մը երգեր:





«ԼՈՒՍԱԲՈՐՉԻ ԿԱՆԹԵՂ»ԻՆ ՄՕՏ



Համա-Հ.Մ.-Ը.Մ.ական բանակումնե-րու աւանդու-թեան կարգ անցած է սրւածել քառագ-գաթ Արագածը՝ փորձաքարի զարնելով Հ.Մ.Ը.Մ.ական ըս-կաուտներու լեռնագնացու-թեան կարողութիւնները:

նախափորձն է Արարատի նուաճումին: Ո՛վ չէ երագած Արագածի կատարին եռա-գոյնը ծածանել, «Մեր հայրե-նիք»ը երգել, բախտաւոր օր մը նոյնը կատարելու համար Արարատի՛ կատարին: Հա-մա-Հ.Մ.-Ը.Մ.ական բանա-կումները այս վայելքը երբեք

չեն զլացած իրենց մասնա-կիցներուն: Արդ, Երեքշաբթի, 5 Օ-գոստոսին, համա-Հ.Մ.-Ը.Մ.ական 10-րդ բանակումի մասնակից 200 սկաուտներ, իրենց պատասխանատունե-րուն առաջնորդութեամբ, բռնեցին Արագածի ճամբան

եւ երեքուկէս ժամուան բա-ւական սպառիչ արշաւէ մը ետք՝ հասան անոր կատարին, աննկարագրելի խանդավա-ռութեամբ: Պահը եղաւ յիշա-տակելի: Բոլորը յուզուած եւ ոգեւորուած՝ մոռցան իրենց յոգնութիւնը, երգեցին, ցըն-ծացին, դրօշներ ծածանեցին

եւ իրենց այցելութիւնը ան-մահացնող լուսանկարներով հրաժեշտ տուին Արագածին, խոստանալով չորս տարի ետք կրկին այցելել անոր:

ԱՐՇԱԻ ԴԵՊԻ ԱՄԲԵՐԴ-ՆՈյն օրը, բանակող ըս-կաուտներու մնացեալ մասը

Սկաուտներ, սակայն, Ա-րագածը չեն մագլցիլ սովորական լեռնագնացութեան մը պարտականութեամբ, ոչ ալ ընթացիկ հետաքրքրու-թեան մը մղումով: Արագա-ծը նուիրական այն լեռն է, որուն կատարին «Լուսաւոր-չի կանթեղ»ն է կախուած: Արագածը կրտսեր եղբայրն է բռնագրաւեալ Արարատին, եւ Արագած բարձրանալու զգացումը բարձրացողին մէջ կը յառաջացնէ տարօրինակ զգացում մը, մղում մը, բարձրանալու նաեւ Արարա-տը: Արագածի նուաճումը





արշաւեց միջնադարեան Հայաստանի պատմական անկրկնելի յուշարձաններէն նկատուող Ամբերդը, Պոստեան ընտանիքի երբեմնի նստավայրը: Ամբերդի կատարին սկառտներ ծածանեցին Եռագոյնը: Անոնք նաեւ այցելեցին մօտակայ պատմական եկեղեցին, ուր մովառելէ եւ աղօթելէ ետք վերադարձան Ամբերդի ստորոտ, ուր տեղի ունեցաւ դա-

սախօսական հանդիպում: Հ.Յ.Դ. Բիւրոյի քաղաքական գրասենեակի պատասխանատու Կիրո Մանոյեան ըսկառտներուն ներկայացուց «Հայ Դատը Հայկական Յեղասպանութեան 100-ամեակին ընդառաջ» նիւթը: Դասախօսութեան յաջորդեց գրոյց-քննարկում:



ՄԿԱՌՏԱԿԱՆ ՀՄՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ ընդհանուր բանակումը ունեցավ սկաուտական հմտութիւններու զարգացման իր օրը՝ Ուրբաթ, 8 Օգոստոսը: Այդ օր, բանակող սկաուտները բաժնուեցան երեք մեծ խումբի:

Առաջին խումբը բանակավայրէն դուրս եկավ առաւօտեան՝ մասնակցելու համար շրջակայ գիւղերուն մէջ կատարուելիք ռալի-արշաւին: Իւրաքանչիւր պատուիրակութիւն

արշաւին մասնակցեցաւ մէկ կամ մէկէ աւելի խմբակներով: Արշաւին ճամբան կ'անցնէր Ղազարաւան, Բագմաղբիւր եւ Փարպի գիւղերէն, ուր հաստատուած էին 12 կայաններ, որոնցմէ իւրաքանչիւրին մէջ աշխատանք մը կը պահանջուէր մասնակցողներէն: Արշաւողները առիթը ունեցան ծանօթանալու հայրենի գիւղերուն, անոնց պատմութեան եւ առօրեայ կենցաղին:

Յետմիջօրէին, թէեւ յոգնած, սակայն խանդավառ տրամադրութեամբ անոնք վերադարձան բանակավայր:

Երկրորդ խումբը մնաց բանակավայր: Խումբի անդամները խմբակներու բաժնուելով մասնակցեցան աշխատանքային հանդիպումներու, ուր ստացան գիտելիքներ եւ կատարեցին ձեռնարկային գեղեցիկ աշխատանքներ:

Երրորդ խումբը կէսօրէ առաջ մասնակցեցաւ լեռնագնացութեան օրէնքները եւ ձեւերը բացատրող փորձերու, իսկ յետմիջօրէին՝ 80 սկաուտներ խմբակներու բաժնուեցան իրենց սորվածը գործնականի վերածելու եւ իրարու դէմ մրցելու համար:

Բանակումին իններորդ օրը իր յրումին հասաւ սկաուտական խանդավառ խարուկահանդէսով:

ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Բանակումին ընթացքին կատարուեցան զանազան մրցումներ, որոնց մրցանակակիրները պարգևատրուեցան փակման արարողութեան ժամանակ:

Ստորեւ՝ մրցանակակիր շրջաններու պատկերը:

ԼԱԻԱԳՈՑՆ ՏԱՂԱԲԱՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

1. Հարաւային Ամերիկա
2. Լիբանան
3. Իրան

ՌԱԼԻ

1. Գանատա
2. Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-Ալմելո
3. Արեւելեան Ամերիկա

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՄ

1. Գանատա
2. Լիբանան
3. Երուսաղէմ-Իրան

ԼԵՌՆԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ

1. Հայաստան՝ Գէորգ Նատարեան
2. Լիբանան՝ Գուրգէն Փափազեան
3. Ուքրանիա՝ Էմիլ Ալեքսիե

ԼԱԻԱԳՈՑՆ ԲԱՆԱԿԱՎԱՅՐ

1. Պաղտատ
2. Լիբանան
3. Իրան





ՓԱԿՄԱՆ ՏՊԱՒՈՐԻՉ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

ՏՈՂԱՆՑՔ, «ԱՐԱՐԱՏԵԱՆ» ԿԱՐԳԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ
ԵՒ ՉՈՐՍ ՏԱՐԻ ԵՏՔ ԿՐԿԻՆ ՀԱՆԴԻՊԵԼՈՒ ԽՈՍՏՈՒՄ



Ամէն սկիզբ ունի իր աւարտը: Համա-Հ.Մ.-Լ.Մ.-ական 10-րդ բանակումն ալ իր յաջող աւարտը ունեցաւ Շաբաթ, 9 Օգոստոսին, պատմութեան յանձնելով Հ.Մ.-Լ.Մ.-ական սկաուտութեան ամէնէն մեծաթիւ բանակումին անջնջելի յիշատակները:

Օրը եղաւ բաւական տպաւորիչ եւ յուզիչ: Հրաժեշտի պահը կը մօտենար եւ ոչ ոք կ'ուզէր բաժնուիլ Հ.Մ.-Լ.Մ.-ական իր հարազատներէն, բանակավայրէն ու հայրենիքէն:

Առաւօտուն շրջաններու ներկայացուցիչներու միջեւ տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում: Յետմիջօրէին, Երեւան գտնուող ծնողներ եւ բարեկամներ այցելեցին Բիւրական եւ ներկայ գտնուեցան փակման պաշտօնական հանդիսութեան, որ տեղի ունեցաւ երեկոյան ժամը 6:30-ին:

Փակման հանդիսութիւնը սկսաւ բանակողներու տողանցքով: Հանդիսութեան ներկայ եղան Արագածոտնի փոխ մարզպետը Մուշեղ Աբգարեան, Հ.Մ.-Լ.Մ.-ի Կեդրոնական վարչութեան եւ Հ.Մ.-Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-ի վարչութեան անդամները:

Հ.Մ.-Լ.Մ.-ի Կեդրոնական վարչութեան անունով հանդիսութեան խօսք առաւ եղբ. Կարպիս Գապասագալեան: Եղբայրը արժեւորելէ ետք «Արարատեան» կարգի պատրաստութեան աշխատանքները, հրաւիրեց դասընթացքին



մասնակիցները ստանալու իրենց կարգերը՝ Կեղրոնական Վարչութեան անդամներուն ձեռամբ:

Յաջորդեց յուշանուէրներու փոխանակումը շրջաններու պատուիրակութիւններու պատասխանատուներուն եւ Կեղրոնական Վարչութեան անդամներուն միջեւ: Յուշանուէրներ յանձնուեցան նաեւ բանակումի խմբապետական կազմի անդամներուն:

Եղբ. Կարպիս Գապասագալեան իր խօսքին մէջ ոգեկոչեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեղրոնական Վարչութեան վաստակաշատ եւ նորոգ հանգուցեալ անդամ եղբ. Միւրան Շիմչիրեանի յիշատակը եւ իր անւան մրցանակը յանձնեց բանակումի քայլերգի հեղինակ քոյր Կարինէ Սիսեռեանին, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսէն:

Այնուհետեւ երոյթներ ունեցան Արադածոտնի մարզի փոխ մարզպետը, բա-

նակումի ընդհանուր խմբապետ եղբ. Վաչէ Նաճարեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետ Օշին Փիրումեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեղրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, որոնք շեշտեցին Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներուն միջոցով հայրենիքի եւ Սփիւռքի տարբեր շրջաններէն եկած երիտասարդներուն միջեւ կապուածութեան ամրապնդման անհրաժեշտութիւնը:

Աւարտին, դրօշները վար առնուեցան «Յառաջ նահատակ» քայլերգի երգեցողութեամբ, չորս տարի ետք կրկին հանդիպելու խոստումով: Կեղրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Գապասագալեան բանակումին դրօշը փոխանցեց բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Վաչէ Նաճարեանին, որ պատօնապէս յայտարարեց բանակումին փակումը:







«ԱՐԱՐԱՏԵԱՆ» ԿԱՐԳԻ ՏՈՒՉՈՒԹՒՄԻՆ ՍԿՈՒՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱՍՏԻՃԱՆ ԽՄԲԱՊԵՏ-ԽՄԲԱՊԵՏՈՒՀԻՆԵՐՈՒ

Մ.Ը.Մ-ի կեդրոնական վարչութեան նախաձեռնութեամբ ու կազմակերպութեամբ, Յուլիս 2014-ին, երկրորդ անգամ ըլլալով կազմակերպուեցաւ «Արարատեան» կարգի դասընթացը: Կարգը կը նկատուի սկստական կարգերու բարձրագոյնը, որուն տիրացման իրաւունք ունին բարձրաստիճան խմբապետներ միայն: «Արարատեան» կարգի առաջին դասընթացը տեղի ունեցած էր 2010-ին, 9-րդ ընդհանուր բանակումի նախօրեակին: Երկրորդը տեղի ունե-

ցաւ 10-րդ ընդհանուր բանակումի նախօրեակի հինգ օրերու ընթացքին, 26-30 Յուլիս 2014-ին, Բիւրական:

«Արարատեան» կարգի դասընթացքին պատասխանատուն էր Մ.Ը.Մ-ի կեդրոնական վարչութեան սկստականի ներկայացուցիչ եղբ. Կարպիս Գապասագալեան: Եղբոր կ'օժանդակէր կեդրոնական սկստական յանձնախումբէն քոյր Թալին Հինտոյեան՝ Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանէն: Դասընթացքը ունեցաւ երեք հանգրուան՝ տեսական, գործնական եւ փորձառական:



ԴԱՍԸՆԹԱՅՔԻՆ ԲԱՅՈՒՄԸ

Դասընթացքին պաշտօնական բացումը կատարուեցաւ Շաբաթ, 26 Յուլիս 2014-ի յետմիջօրէի ժամը 6:00-ին, Բիւրականի բանակավայրին մէջ, ներկայութեամբ Մ.Ը.Մ-ի կեդրոնական վարչութեան անդամ եղբայրներ Կարպիս Գապասագալեանի, Բագրատ Եսայեանի եւ կեդրոնական սկստական յանձնախումբի անդամ եղբայրներ Վաչէ Նաճարեանի, Ռոմանոս Պետրոսեանի, քոյրեր Թալին Հինտոյեան, Ալին Պաղտասարեան եւ Թալին Օրտոդլեանի:

Այս առիթով խօսքեր արտասանեցին եղբայրներ Կարպիս Գապասագալեան եւ Բագրատ Եսայեան:

Եղբ. Կարպիս Գապասագալեան «Ա-

րարատեան» կարգի մասնակիցները հրա-
ւիրեց յանձնառու գիտակցութեամբ եւ
աչալրջութեամբ գործօն մասնակցութիւն
ունենալու այս յոյժ կարեւոր դասընթաց-
քին: Ան յիշեցուց, որ «Արարատեան» կար-
գը յաճախակի կազմակերպուող դասըն-
թացք մը չէ, այլ չորս տարին անգամ մը
իրականացուող դասընթացք է, որուն յա-
ջողութիւնը կախեալ է մասնակիցներէն:

Իր կարգին, եղբ. Բագրատ Եսայեան
յայտնեց, որ «Արարատեան» կարգը կարե-
լի չէր Արարատէն հեռու վայրի մը մէջ
իրագործել: Եղբ. Եսայեան կարգին մաս-
նակիցները հրաւիրեց իրենց ստանձնած
պատասխանատուութիւնը արժեւորելու
մեր ազգային կեանքին մէջ գործօն դերա-
կատարութեամբ:

ԴԱՍԸՆԹԱՅՔԸ

«Արարատեան» կարգի գործնական
հանգրուանի դասընթացքին մասնակցե-
ցան միութեան կազմակերպական եօթը շրջաններէն՝ Արեւել-
եան եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներ, Լիբանան, Հարա-
ւային Ամերիկա, Ֆրանսա, Սուրիա եւ Հայաստան, 26 միաւո-
րի եւ մասնաճիւղի խմբապետ-խմբապետուհիներ (անուա-
նացանկը տեսնել առանձին), որոնք բաժնուեցան աշխա-
տանքային երեք խմբակներու: Առօրեայ դրութեամբ անոնք
ընտրեցին իրենց խմբապետական եւ աստիճանաւորական
կազմերը՝ իրագործելու համար ծրագրուած յայտագիրը:

Կարգին թեկնածուները գործնական հանգրուանին ներ-
կայացուցին իրենց թեզերը: Տեսական հանգրուանին, ըստ
նախասիրութեան, անոնք դասընթացքի գիտելիքներու ցան-
կէն ընտրած եւ պատրաստած էին իրենց նիւթերը, որոնք
կ'ընդգրկէին միութեանական, ազգային, սկստական, հոգե-
բանական, քաղաքացիական եւ կրօնական գիտելիքներ: Թե-



զերու ներկայացումը կատարուեցաւ արդիական միջոցներով:
Առիթ տրուեցաւ նաեւ միասնաբար քննարկելու նիւթերը:

Թեկնածուները ներկայացուցին ստեղծագործութիւն մը,
գոր մասնակիցները լսելէ եւ ուսումնասիրելէ ետք, որոշեցին
արդի հաղորդակցութեան միջոցներէն օգտուելով կիրարկելի
դարձնել զայն իրենց շրջաններուն մէջ:

Թեկնածուներէն պահանջուեցաւ ներկայացնել սկստա-
կան դէպք մը եւ անոր ստեղծած դժուարութեան դիմաց՝ իբ-
րեւ պատասխանատու իրենց տուած լուծումը: Դէպքերու
ներկայացումէն ետք, ներկաները թեր ու դէմ կարծիքներով
աւելի հարստացուցին իրենց փորձառութիւնը:

Դասընթացքի ընթացքին իւրաքանչիւր խմբակ ներկայա-
ցուց կազմակերպական աշխատանքի մը թղթածրարը՝ նիւթ
ունենալով նոր մասնաճիւղի մը հիմնադրումը, խմբապետնե-
րու վերաորակաւորման դասընթացք մը
եւ դաստիարակչական սեմինար մը:

Դասընթացքի յայտագիրին ընթաց-
քին մասնակցողները կատարեցին ըս-
կստական արարողութիւններու եւ
կարգապահական վարժութիւններու կի-
րառական փորձեր:

Դասընթացքը ունեցաւ իր ընկերային
ընթացքը, ինչ որ աւելի ամրապնդեց
եւ սերտացուց շրջաններու միջեւ գոր-
ծակցութեան ոգին:

ԴԱՍԸՆԹԱՅՔԻՆ ՓԱԿՈՒՄԸ

«Արարատեան» կարգի գործնական
հանգրուանի փակման արարողութիւնը
տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 30 Յուլիսի
յետմիջօրէի ժամը 6:00-ին:

Փակման արարողութեան, Հ.Մ.Ը.Մ-ի



Կեղերոնական վարչութեան անունով խօսք առնելով եղբայրս Գապասագալեան նախ եւ առաջ գնահատեց դասընթացքին մասնակցող խմբապետ-խմբապետուհիները իրենց գործօն մասնակցութեան եւ առաւելագոյն ճիգին համար: Ապա, ան կարեւոր նկատեց իրենց ստանձնած պատասխանատուութեան ճամբով իրենց հետագայ յանձնառութիւնը: Եղբայրը ներկայացուց նաեւ այն ակնկալութիւնները, որոնք կապուած են իրենց, ըլլայ այդ սկստական շարքերէն թէ գերադաս աստիճանաւորներէ եւ մարմիններէ:



Փողկապներու տուչութենէ առաջ, եղբ. Գապասագալեան բացատրեց «Արարատեան» կարգի փողկապին իմաստը, նշելով, որ ան աշխատանքի լուծ է եւ կարելի չէ անկէ հրաժարիլ, ապա յանձնելով «Արարատեան» կարգի փողկապները, ան մաղթեց վերանորոգ կամբով եւ յանձնառու գիտակցութեամբ շարունակել իրենց վստահուած առաքելութիւնը եւ դառնալ մէկական Արարատ լեռ՝ ի խնդիր Հ.Մ.Ը.Մ.ի նպատակին եւ հայ ժողովուրդի արդար դատին հետապնդման: Խօսքին վերջին բաժինով, եղբ. Գապասագալեան կարգին

մասնակիցներուն յորդորեց 10-րդ ընդհանուր բանակումի տեւողութեան լաւագոյն ձեւով կատարել իրենց փորձառական հանգրուանի աշխատանքները՝ արժանանալու համար «Արարատեան» կարգի վկայագիրին ու մետալին:

Դասընթացքին մասնակցող խմբապետ-խմբապետուհիները վերանորոգեցին իրենց սկստական խոստումը՝ իբրեւ հաւաստիք ու երաշխիք իրենց յանձնառութեան, ու բարձրահնչիւն երգեցին «Յառաջ նահատակ» քայլերգը, ապա ինքնավստահ ու հաստատակամ քայլերով մուտք գործեցին 10-րդ ընդհանուր բանակումի բանակավայր:

ԿԱՐԳԻՆ ՏՈՒՉՈՒԹԻՒՆԸ
Տասը օր ետք, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ ընդհանուր բանակումի փակման հանդիսութեան, փորձառական հանգրուանի աշխատանքները յաջողութեամբ իրականացուցած քոյրերն ու եղբայրները «Արարատեան» կարգի իրենց վկայականներն ու պէճերը ստացան բանակումի մասնակից-



ներու, Կեղերոնական վարչութեան անդամներու եւ հիւրերու ներկայութեան:



«ԱՐԱՐԱՏԵԱՆ ԿԱՐԳ»Ի ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

- Արեւելեան Մ. Նահանգներէն՝ քոյր Սօսէ Պեօճեքեան, եղբ. Սմբատ Դրամկոչեան
- Արեւմտեան Մ. Նահանգներէն՝ քոյր Նայիրի Մանուկեան, եղբ. Արտաշէս Ղազարեան, քոյր Իվանա Գրիգորեան, քոյր Նաթալի Յինտոյեան, քոյր Կարինէ Քենտոյեան, քոյր Սօսի Պէքարեան, քոյր Լարա Փանոսեան, քոյր Դալար Գալուստեան
- Լիբանանէն՝ քոյր Ալիք Տէր Պետրոսեան, եղբ. Կարէն Աբրահամեան, եղբ. Յակոբ Չաթալեան, քոյր Թամար Քէշիշեան, եղբ. Բիզանդ Սկրտիչեան, քոյր Արտա Ձէթունլեան, եղբ. Ջաւէն Տէր Պետրոսեան, եղբ. Ռազմիկ Տօնիկեան, քոյր Շողեր Թալաքեան
- Յարաւային Ամերիկայէն՝ եղբ. Մարիանօ Տօնիկեան
- Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.էն՝ քոյր Նարէ Խլղաթեան, եղբ. Սահակ Մատարեան, եղբ. Ալեքսան Գուլումճեան, եղբ. Վիգէն Յովհաննիսեան
- Սուրիայէն՝ եղբ. Յովիկ Փամբալեան
- Փարիզէն՝ քոյր Կարինէ Սիսեռեան, եղբ. Պօղոս Մահպուլաքեան



ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ՝

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼՈՆՏՈՆԻ ՄԿԱՌԲՏՆԵՐՈՒՄՆ ԱՐՑԱԽ ԵՌՕՐԵԱՅ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումի նախօրեակին, Հ.Մ.Ը.Մ.Ի Լոնտոնի սկաուտներու 41 հոգինոց պատուիրակութիւնը այցելեց Արցախ եւ յիշատակելի երեք օրեր

անցուց հայոց արժուերոյնին մէջ: Արցախի մէջ, սկաուտներ այցելեցին Շուշի, Գանձասար, Նիկոլ Դոմմանի տուն-թանգարան, Ստեփանակերտի գորանոց, «Մենք ենք մեր սարերը» յուշար-

ձան եւ ՀՕՄ-ի «Սօսէ» մանկատուն: Այս առիթով, անոնք նուէրներ փոխանցեցին արցախցի զինուորներու եւ մանուկներու:

Այցելութեան ծիրէն ներս, պատուիրակութիւնը հանդիպում մը ունեցաւ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան Ազգային Ժողովի նախագահ Աշոտ Ղուկեանի հետ:

Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտները ողջունելով, Ղուկեան կարեւոր նկատեց Սփիւռքի կազմակերպութիւններու երիտասարդական խումբերուն Արցախ այցելութիւնը, որովհետեւ նման այցելութիւններով կարելիութիւնը կը ստեղծուի հայրենիքին հետ կապերը ամրապնդելու:

Իր խօսքին մէջ, Ազգային Ժողովի

նախագահը խօսեցաւ Հարաւային Կովկասի անվտանգութեան հաստատման մէջ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան ունեցած դերին, անոր հանրային-քաղաքական, ընկերային-տնտեսական կեանքին, Արցախի մէջ իրականացուող համահայկական ծրագիրներուն, ինչպէս նաեւ Լեւոնային Ղարաբաղի միջազգային ճանաչման գործընթացին մասին: Ան նաեւ պատասխանեց Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտներու հարցումներուն:

Եւ կահաւորուած է անգլիարենակ Սեւան Արթինի ջանքերով: Լսարանին բացման հանդիսութեան ողջոյնի խօսքեր արտասանեցին Արցախի պետական համալսարանի նախագահ

Մանուշ Մինասեան եւ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան մշակոյթի եւ երիտասարդական հարցերու փոխնախարար Լեւոնիկ Յովհաննիսեան:

ՄՇԵՐ ԶՈՒԼՀԱՃԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ԼՍԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ական պատուիրակութիւնը ներկայ գտնուեցաւ նաեւ Արցախի պետական համալսարանին մէջ Մշեր Զուլհաճեանի անունը կրող լսարանին բացման հանդիսութեան: Զուլհաճեան 1994-ին նահատակուած է Արցախի ազատագրութեան կռիւներուն: Անոր անունը կրող լսարանը վերանորոգուած



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՀԱՄԱՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ
ԲԱՆԱԿՈՒՄԸ ԱՅՑԵԼԵԼՈՎ

ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԿԱՏԱՐԵՑ ԲԻՒՐԱԿԱՆԻ ԲԱՆԱԿԱՎԱՅՐԻՆ ԲԱՑՈՒՄԸ

Ուրբաթ, 22 Օգոստոսին, Հ.Մ.Ը.Մ.-ի Բիւրականի բանակավայր այցելեց եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի համահայաստանեան բանակումի փակման արարողութեան

ներկայ գտնուեցաւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան: Այցելութեան առիթով նախագահը կատարեց բանակավայրին պաշտօնական բացումը, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ

Մկրտիչեանի, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի վարչութեան ատենապետ եղբ. Օշին Փիրումեանի եւ Երեւանի վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեանի:

Բանակավայրին մուտքին տեղադրուած փայտեայ ցուցատախտակին բացումը կատարելէ ետք, նախագահ Սարգսեան ծանօթացաւ համահայաստանեան բանակումի մասնակիցներուն, 12-17 տարեկան 300 սկաուտներ եւ «Խաղաղութեան սուրճանդակներ» ծրագիրին մէջ ներառնուած՝ Հայաստանի տարբեր մարզերու ընկերային խնամքի տակ եղող հաստատութիւններու երեխաներ:

Ապա, նախագահը մասնակցեցաւ բանակումի փակման արարողութեան, ուր արտասանեց սկաուտութեան դերն ու առաքելութիւնը գնահատող խօսք մը:

Խօսքով հանդէս եկաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ յայտնեց, որ «Համաշխարհային սկաուտութիւնը կրնայ նախանձիլ ու պարծենալ նման բանակավայրով մը, ուր սերունդներ քաղաքացիական կրթութիւն եւ հայեցի դաստիարակութիւն պիտի

ստանան դաստիարակիչ բանակումներով եւ օգտաշատ ծրագիրներով»:

Շարունակելով, եղբ. Մկրտիչեան շնորհակալութիւն յայտնեց բանակավայրին ընդարձակումը եւ կառուցումը իրականացուցած հայրենի պետութեան եւ «Փիւնիկ» մարդկային պաշարներու հիմնադրամին: Ապա, իր խօսքը նախագահ Սարգսեանին ուղղելով ան ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.-ի մեծ ընտանիքը երախտապարտութեան խոր զգացումներով այսօր շնորհակալութեան խօսք կ'ուղղէ ձեզի, որ ինչպէս միշտ, խօսքով թէ գործով կը մնաք մեծ հաւատացող մը հայ սկաուտութեան առաքելութեան: ԸՍ-կառուութիւնը մեր վաղուան հայութիւնն է, մեր յոյսն ու ապագան է: Հզօր ու բարգաւաճ հայրենիքի գրաւականն է: Հետեւաբար, այս բանակավայրին կառուցումը եւ օգտագործումը կարելորդ քայլ մըն է հզօր ու բարգաւաճ հայրենիքի կերտման ճամբուն վրայ, Արագածէն Արարատ մեր դատին տէ՛րը ըլլալու սկաուտական խոստումին իրականացման ճամբուն վրայ»:

ԸՆԴԱՐՁԱԿՈՒԱԾ ԲԱՆԱԿԱՎԱՅՐԸ

Հ.Մ.Ը.Մ.-ի Բիւրականի բանակավայրը արդէն ունի 14 տարուան կեանք: Նոյեմբեր 2000-ին, բանակավայրը՝ 20 հազար քառ. մետր տարածութիւն, Հա-

յաստանի կառավարութեան կողմէ նուէր տրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ին: 2011-ին, կառավարութիւնը մշտական անհատոյց օգտագործման նպատակով տրամադրեց նաեւ բանակավայրին կողքի մէկ հեկտար տարածութիւնը: Նոր





հողատարածքին շինարարական աշխատանքները, հայրենի պետութեան եւ «Փիւնիկ» մարդկային պաշարներու հիմնադրամին նիւթական աջակցութեամբ, ընթացք առին 29 Մարտին եւ իրենց աւարտին հասան 29 Յուլիսին:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի Երեւանի վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան այս մասին լրագրողներու հետ ունեցած հանդիպումի մը ընթացքին յայտնեց. «Իւրաքանչիւր չորս տարին անգամ մը տեղի կ'ունենայ համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակում, այս տարի Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ աննախադէպ մեծ թիւով մասնակիցներով տեղի ունեցաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումը, որուն մասնակցեցան

աւելի քան 700 սկաուտներ աշխարհի 18 երկիրներէ: Այս բանակավայրը կառուցելով՝ մենք կարողացանք այդ պայմանները ստեղծել: Անիկա կառուցուած է 400 հոգիի համար, իսկ առաջին հատուածը նախատեսուած էր մօտ 600 հոգիի համար: Այսինքն, մենք այսուհետեւ պիտի կարենանք ընդունիլ 1000 սկաուտ: Ասիկա մեզի համար շատ ուրախալի փաստ է, որովհետեւ վերջապէս մենք կարողացանք մեր պայմանները բարելաւել»:





ՀԶՕՐ ԵՆՔ, ԵՐԲ ՄԵՐ ԲԱՆԱԿԸ ՀԶՕՐ Է

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ
ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԽՕՍԲԸ՝ ՎԱԶԳԻՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ
ԱՆՈՒԱՆ ԶՕՐԱՆՈՑ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ)

Տարիներու եւ սերունդներու երազ մը կ'իրականանայ այսօր, սկառուտական մեր շարքերուն հայոց բանակի զօրանոց այցելութեամբ:

Բանակ եւ զօրանոց խորհրդանիշներ են պետականութեան, անկախութեան եւ գերիշխանութեան: Իսկ Հ.Մ.Ը.Մ.

եղած է ու կը մնայ մնայուն պաշտպանը հայրենի պետականութեան, անկախութեան եւ գերիշխանութեան:

Նոր չէ այս երեւոյթը: Հայաստանի Ա. Հանրապետութեան օրերուն Հ.Մ.Ը.Մ. առաջիններէն էր, որ իր ծառայութիւնները դրաւ հայոց պետականութեան տրամադրութեան տակ, մտա՛ւ որբանոցները եւ Յեղասպանութեան որբերէն, թշուառ ու անտէր պատանիներէն կերտեց նո՛ր հայր, հայկական բանակի ապագայ զինուորը:

Հայաստանի վերանկախացումէն ետք, Հ.Մ.Ը.Մ. դարձեալ առաջիններէն էր, որ իր հանրանուէր գործունէութիւնը ծաւալեց հայրենիքի մէջ եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ճամբով ջանաց այս անգամ կերտել նո՛ր քաղաքացին, ազգային իր արժէքներուն եւ նպատակներուն հաւատարիմ հայ մարդը, ազգային բանակ մտնելու պատրաստուող հայ երիտասարդը:

Շատերը Հ.Մ.Ը.Մ.ը ճանչցան իր քայլերգին բառերով, իբրեւ «կամաւոր բանակ» հայութեան եւ հայրենիքին, մի՛շտ ծառայելու, ծառայութեամբ մեծնալու կամքով ու տեսիլքով:



Շատերը Հ.Մ.Ը.Մ-ի մէջ տեսան անհայրենիք ժողովուրդի մը փոքրիկ բանակը, որ հաւատաց մեծ նպատակներու, մեծ ու անսակարկելի արժէքներու:

Հ.Մ.Ը.Մ-ը հաւատաց ու այսօր ալ կը հաւատայ, թէ ինչ ալ ըլլան պայմանները, հայոց պետականութիւնը կը մնայ միակ ապաւէնը մեր գոյատեւման, իսկ հայոց բանակը կը հանդիսանայ հիմնական պաշտպանն ու երաշխիքը այդ գոյատեւման:

Մենք հօր ենք, երբ մեր բանակը հօր է:

Մենք անպարտելի ենք, երբ մեր բանակը համահայկական ուշադրութեան առարկայ դարձուցած ենք:

Հայոց բանակը մեր փառքն է ու մեր պատիւը:

Հայոց բանակը մեր հպարտութիւնն է ու մեր արժանապատուութիւնը:

Հայոց բանակի տողանցքին հետ հողը չէ որ կը դըրդայ, այլ՝ մէն մի հայու սիրտն ու հոգին է որ կը ցնցուի հայրենակարօտ զգացումներով:

Հայոց բանակի տողանցքին հետ զօրամաս մը չէ որ միայն կը տողանցէ, այլ՝ մեր պատմութեան բոլոր հերոսները, փառանգ առ փառանգ, անցեալի նախարարական գունդերէն մինչեւ Ֆետայական մեր խումբերը եւ Արցախեան պայքարի հերոսական վաշտերը:

Հ.Մ.Ը.Մ-ական սերունդները ա՛յս համոզումով կը մեծնան ու հասակ կ'առնեն, խոր յարգանք տածելով հայոց բանակին եւ անոր վեհ առաքելութեան:

Հ.Մ.Ը.Մ-ական տղաք ու աղջիկներ ա՛յս դաստիարակութեամբ կը խոնարհին հայոց բանակի անթիւ զոհողութիւններուն դիմաց եւ, իբրեւ գերագոյն արժէք, զայն կը դասեն ամէն բանէ վեր:



Այսօր, «Կամաւոր բանակը» կանգնած է կողքին պետական բանակին: Իսկ կա՞յ աւելի գեղեցիկ պատկեր՝ քան համա-Հ.Մ.Ը.Մ-ական, համահայկական այս զօրակցութիւնը, որ սա պահուն կը պարզուի մեր աչքերուն դիմաց: Այստեղ ներկայ սկաուտներու ճամբով ամբողջ հայութիւնն է, որ այսօր յարգանքի իր տուրքը կու տայ Հայոց բանակի նուիրեալներուն, որոնք կը մնան միշտ արթուն, միշտ խրոխտ ու անձնագոհ, որպէսզի հայրենիքի սահմանները մնան ապահով, իսկ զաւակները՝ պաշտպանուած:

Հայոց բանակը իր արիութեամբ եւ հայրենասիրութեամբ ներշնչումի աղբիւր կը հանդիսանայ աշխարհասփիւռ մեր սկաուտներուն:

Հայոց բանակը իր հերոսութիւններով եւ նահատակութիւններով կը գրէ մեր նորագոյն պատմութեան ամէնէն պանծալի էջերը, հետեւաբար ան կը դաստիարակէ մեզ, կը կերտէ մեր ինքնութիւնը եւ դիմագիծը:

Մենք պարտական ենք հայոց բանակին:

Ու հաւատացէ՛ք, եթէ մեր սկաուտները պայմանները բերումով հայոց բանակին մէջ չեն, հայոց բանակը սակայն անոնցմէ իւրաքանչիւրին մտքին ու սրտին մէջն է, իւրաքանչիւրին մտածումներուն եւ աղօթքներուն մէջն է, բոլորը կը ցանկան ու կը մաղթեն, որ ան մնայ անվնաս, մնայ ամո՛ւր, որպէսզի հայոց հայրենիքը մնայ ամուր եւ հօր, որպէսզի հայութիւնը մնայ ապահով ու երջանիկ,

Մինչեւ մեր ազգային բոլոր տենչերուն իրականացումը

Եւ մեր պատմական բոլոր իրաւունքներուն վերականգնումը



ԱՐԱՐԱՏԸ ԱՆՏԷՐ ՊԻՏԻ ՉՉԷՔ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ԿԱՐՊԻՍ ԳԱՊԱՍԱԳԱԼԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝ ԲԱՆԱԿՈՒՄԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ԲԻԻՐԱԿԱՆ)

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումները հինգերորդին սկսեալ վճռուած են իրագործուիլ մայրենի հողին վրայ եւ չորս տարին անգամ մը դարձած են մնայուն ժամադրավայրը Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհացրիւ սկաուտներուն:

Իւրաքանչիւր ընդհանուր բանակում ունեցած է իր կարգախօսը, եւ կարգախօսները պատահական չեն եղած, այլ անոնք ունեցած են իրենց նպատակը եւ հիմնաւորուած հեռանկարները, որոնք առաջադրանքներ եղած են ո՛չ միայն ընդհանուր բանակումներուն, այլ մեր սկաուտական ու միութենական գործունէութիւններուն համար: Անոնք եղած են շղթայուած անքակտելի օղակներ, որոնք համարժէք իմաստ ունեցած են բոլոր ժամանակներուն ալ:

Հետեւաբար, այս 10-րդ ընդհանուր բանակումը կու գայ 10-րդ օղակ մը միացնելու միութեան հետապնդած նպատակ-



ներուն: Արդարեւ, «Արագածէն Արարատ, տէր ենք մեր դատին» կարգախօսով դուք պիտի առաջնորդուիք ու միասնաբար գործէք բանակումի ամբողջ տեւողութեան, եւ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի սեմին, յանձնառու գիտակցութեամբ եւ վերանորոգ ուխտով պահանջատէր պիտի մնաք մեր ժողովուրդի հետապնդած անժամանցելի դատին:

Ձեր բոլորին ուշադրութեան կ'ուզենք յանձնել, թէ այս ընդհանուր բանակումին յաջողութիւնը կախեալ պիտի ըլլայ ձեզմէ: Որպէս Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներ, ձեր խոստումին ու դաւանանքին թելադրութեամբ պարտաւոր էք իւրաքանչիւր աշխատանքի ու դժուարութեան մէջ դուրս գալ ձեր անձերէն ու գործել փոխադարձ հասկացողութեան, անկեղծութեան, վստահութեան ու ծառայութեան ոգիով, իսկ կարգապահութիւնը դարձնել ձեր առօրեային անշեղ ուղին:



Ձեզմէ ոմանք մասնակցած են նախորդ բանակումներուն եւ ծանօթ են նախկին բանակավայրի սահմաններուն ու անցեալի յարմարութիւններուն: Այսօր մեր բոլորին առջեւ կը պարզուի աւելի ընդարձակ ու վերանորոգ բանակավայր մը, հաւանաբար նման գեղեցկութեամբ բանակավայր մը կարելի չէ տեսնել ամբողջ Եւրասիոյ տարածքին, ան գեղեցիկ է մեզի համար, որովհետեւ Հայաստան է:

Սիրելի՛ քոյրեր եւ եղբայրներ, Անշուշտ, քաջ գիտենք, թէ այս բոլորը մոգական զաւազանով չկատարուեցան, այլ՝ հայրենի պետութեան եւ «Փիւնիկ» մարդկային պաշարներու հիմնադ-





ըամին շնորհիւ կարելի եղաւ անկարելին կարելի դարձնել:
 Հետեւաբար, պարտք կը զգամ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ ձեր բոլորին անունով երախտագիտական մեր անկեղծ զգացումներն ու շնորհակալութիւնը յայտնելու Հ.Հ. նախագահին եւ «Փիւնիկ» հիմնադրամի նախագահին, որոնք անձնապէս սատար հանդիսացան այս բանակավայրին շինութեան:

*Սիրելի՛ քոյրեր եւ եղբայրներ,
 Կը հրաւիրեմ ձեզ Արագածի փէշերէն ձեր հայեացքները*

սեւեռելու դէպի Սրբազան լեռ եւ արիաբար ու համոզումով խոստանալու, որ Արարատը անտէր պիտի չձգէք:

Ահա այս առաջադրանքներով միասնաբար պիտի ընթանանք յառաջ, հաւատարիմ մեր զոյգ նշանաբաններուն՝ «Մի՛շտ պատրաստ»ին եւ վեհապանծ «Բարձրացի՛ր-բարձրացուր»ին:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անունով բացուած կը յայտարարեմ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումը:



*Elegance
 Plus*

Shoes, Bags,
 Fashion Accessories
 & Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
 Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556

Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812

E-mail: hratch@goldenmountains.com

hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.

ՄԵՐ ՀԱՅԵԱՑՔԸ ՄԻՇՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ Է ԼԻՆԵԼՈՒ ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ԲԱԳՐԱՏ ԵՍԱՅԵԱՆԻ ԽՕՍԲԸ՝ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ԵՐԵՒԱՆԻ «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ» ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ)

Հ.Մ.Ը.Մ.Ի Կենտրոնական վարչության անունից ողջունում եմ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումի մասնակիցներին Հայաստանի եւ համայն հայութեան մայրաքաղաք Երեւանում: Ահա արդէն 20-րդ տարին անընդմէջ մեր աշխարհասփիւռ ընտանիքի համար կարեւորագոյն սկսողական այս միջոցառումը մենք կազմակերպում ենք Հայաստանում: Այս շարունակական ու անփոփոխ մօտեցումով մենք գործնականում վերահաստատում ենք զաղափարական այն անսակարկելի հիմնադրոյթը, որի շուրջ տասնամեակների ընթացքում մեր շարքերն ենք ներգրաւել եւ հայրենասիրական ոգով դաստի-



արակել սերունդներ օտարափերում, թէ՛ միայն անկախ Հայրենիքի գոյութիւնն է Հայ ժողովրդի իղձերի իրականացման գրաւականը: Այս գաղափարով են առաջնորդուել Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադիրներն ու նուիրեալները, տասնամեակներ վառ պահելով անկախութեան գաղափարը, կազմակերպելով Սփիւռքի համայնքները, ստեղծելով ու զարգացնելով Հ.Մ.Ը.Մ.Ի համագաղութային, իսկ Հայաստանի անկախացումից յետոյ՝ նաեւ համահայկա-

կան կառույցը, իրերայաջորդ սերունդներին փոխանցելով այն արժեհամակարգը, որի շնորհիւ այսօր Հ.Մ.Ը.Մ.ը դարձել է համահայկական ամէնաընդգրկուն ու ամենամեծաթիւ մանկական-երիտասարդական կազմակերպութիւնը:



Եւ այսօր, Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաքի կենտրոնում կանգնած 10-րդ բանակումի մասնակիցները ձեր ներկայութեամբ հաստատում էք, որ արդէն մէկ հարիւրամեակ, ոչ իրենց կամքով աշխարհի տարբեր երկրներում յայտնուած մեր հայրերի ու պապերի սերունդները, հաւատարիմ մնալով իրենց արմատներին, յաջողել են մեզ փոխանցել հայ ժողովրդի լինելութեան հաւատը, մեր ազգային նպատակներին հասնելու վճռական կամքն ու այդ նպատակների համար պայքարելու անկոտրում ոգին: Մարդկութեան պատմութեան մէջ ամենազազրելի ոճրագործութեան 100-րդ տարելիցի նախօրէին աննախադէպ թուով եւ «Արագածից Արարատ» տէրն ենք մեր դատին» կարգախօսով հաւաքուած մեր այս սերունդը կրկին անգամ վերահաստատում է, որ

անկասելի է դէպի մեր ժողովրդի իրաւունքների ամբողջական վերականգնում մեր ընթացքը: Մեր համախմբուածութեան, Հայաստանն ու Սփիւռքը հզօրացնելու, ազգային միասնականութիւնն ամրապնդելու ուղղութեամբ ամէնօրեայ աշխատանքի շնորհիւ է հնարաւոր իրականութիւն դարձնել հայ ժողովրդի մեծ տեսլականը: Սա է մեր ճանապարհը եւ մենք հաւատում ենք, որ այսօր, մօտ 800 սկաուտներով բանակում անելով Արագածի լանջին, մեր հայեացքը միշտ ուղղուած է լինելու դէպի Արարատ, եւ մի օր էլ եթէ ոչ մենք, վստահ եմ, զայիք սերունդները կարողանալու են համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակում կազմակերպել Արարատի փէշերին, մեր Ազատ, Անկախ ու Միացեալ Հայրենիքում:

Յաջողութիւն եմ ցանկանում համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումի մասնակիցներին, վաղելէք Հայրենիքում միասին անցկացնելու հաճոյքը, ամրապնդէք ձեր ոգին, ձեռք բերէք նոր ընկերներ եւ կարծում եմ, որ



այս բանակումի աւարտից յետոյ կը վերադառնաք ձեր երկրները՝ վերանորոգած Հ.Մ.Ը.Մ.ական խոստումն ու հաւատարիմ մեր կարգախօսին՝ «Բարձրացիր-բարձրացրու»:

ARMENIA

for private and group trips

www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages



WITH THE COLLABORATION OF
THE NEW AIRLINE COMPANY





Photos: © Yann Arthus-Bertrand / La Terre vue du Ciel. Licence 075 960031 StudioVICKEN 2005 PARIS

Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS

Select
your Journey

Guided Tours
for 8 Days
or 12 Days



11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com



«ՅԱՌԱՋ, ԴԷՊԻ ՅԱՂԹԱՆԱԿ»

(ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 10-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱՊԵՏ ԵՂԲ. ՎԱԶԻ ՆԱՃԱՐԵԱՆԻ ԽՕՍԲԸ՝ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ԵՐԵՒԱՆԻ «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ» ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ)

1 918ին ծնունդ կ'առնէ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.ը, նպատակ ունենալով պատրաստել ֆիզիքապէս տոկո՛ւն, իմացական եւ հոգեկան բարձր արժանիքի տէր հայ քաղաքացիներ: Հ.Մ.Ը.Մ. մարդակերտումի իր առաքելութեան մէջ նախապայման կը ճշդէ ազգային դաստիարակութիւնը, հայրենասիրութիւնը եւ ազգասիրութիւնը:

Իր պատմութեան ընթացքին, Հ.Մ.Ը.Մ. կը դառնայ հնոց, ուր բազմաթիւ սերունդներ կը դաստիարակուին ու կ'աճին հայրենիքի սիրով, հպարտ՝ իրենց հայկական ինքնութեամբ եւ ազգային արժէքներով, միշտ կրելով Արարատի գագաթը հասնելու տենչը իրենց մտքերուն ու հոգիներուն մէջ:

Հ.Մ.Ը.Մ. այսօր արդէն 96-ամեայ կեանք ունեցող, սակայն տակաւին երիտասարդ միութիւն է, հօր՝ իր 25.000-է աւելի անդամներով, հարուստ՝ 105 մասնաճիւղերով եւ հպարտ իր



հարիւր հազարաւոր համակիրներով՝ աւելի քան 18 շրջաններու մէջ ապրող ու գործող:

Իր նպատակին ծառայելու համար, տարբեր նախաձեռնութիւններու կարգին, Հ.Մ.Ը.Մ. կը կազմակերպէ նաեւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներ, որոնց ընթացքին Սփիւռքի չորս ծագերէն Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտներ կը մէկտեղուին հայրենի հողին վրայ՝ իրականացնելու իրենց տեսլականը, ստանալու ազգային եւ միութեանական դաստիարակութիւն

ու միջազգային բեմին վրայ ամրագրելու Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան տեղն ու դերը:

36 տարիներ առաջ՝ 1978-ին սկսած սկաուտական այս աւանդութիւնը, որ նախ ձեւ ու մարմին ստացաւ Սփիւռքի տարբեր գաղութներու մէջ, ապա՝ 20 տարի առաջ վերընձիւղեցաւ հայրենի հողին վրայ, այսօր, 10-րդ անգամն ըլլալով, իրականութիւն կը դառնայ ու կը կայանայ Հինգշաբթի, 31 Յուլիսէն մինչեւ Շաբաթ, 9 Օգոստոս 2014, Բիւրականի բա-

նակավայրին մէջ, Արագած լեռան լանջին, աւելի քան 700 մասնակիցներով:

Այս բանակումը, որ կը կազմակերպուի Հայկական Յեղասպանութեան 100-ամեակի նախօրեակին եւ որուն բնաբանն է «Արագածէն Արարատ, տէրն ենք մեր դատին», անհերքելի ապացոյցը պիտի ըլլայ հայ ժողովուրդի գոյատեւման՝ իր արդար դատի պահանջատիրութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ական աննկուն կամքին՝ նուաճելու Արարատի գագաթը:

10 օրերու ընթացքին 700 պատանի սկաուտներ պիտի ապրին ազգային մթնոլորտի մէջ, պիտի ծանօթանան հայկական մշակոյթին եւ ազգային աւանդութիւններուն, պիտի այցելեն մեր պատմութեան առանցքը հանդիսացող հայրենիքի տարբեր վայրերը ու պիտի ներշնչուին հայրենի հողէն փոխանցուող ուժով ու գորութեամբ՝ նուիրումով շարունակելու իրենց կամաւոր երթը:

10 օրերու ընթացքին, մասնակից 700 սկաուտները պիտի դառնան մէկ անձ ու մէկ բռունցք՝ ամէն գնով հայ ազգին ծառայող ու անոր Դատին պահանջատէր ժառանգորդը հանդիսացող:

Կասկած չկայ, որ Հայաստանի մէջ կայացող համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ այս բանակումը պիտի ըլլայ այս եւ յաջորդող սերունդներուն ներշնչման աղբիւրը: Հ.Մ.Ը.Մ. ինչպէս երէկ, այսօր ու վաղը եւս պիտի շարունակէ համաշխար-



հային իր երթը՝ մինչեւ հայ ժողովուրդի արդար Դատին լուծումն ու հատուցումը:

Մեր քայլերդին բառերուն հետեւելով՝ «Երթանք կոթողել դրօշակն Եռագոյն», շարունակենք մեր ընթացքը՝ «Յառաջ, դէպի յաղթանակ»:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby


HOTEL



PAVILLON MONCEAU
PARIS

*Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.*

PAVILLON MONCEAU



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

ԱԶԳԻՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՀԶՕՐՈՒԹԻՒՆԸ ԱՊՐԻԼ

(ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 10-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱՊԵՏ
ԵՂԲ. ՎԱԶԷՆԱՃԱՐԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ
ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ԲԻՒՐԱԿԱՆ)

Բարի գալուստ կը մաղթեմ ձեզի համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումին, Բիւրականի բանակավայրին մէջ, ուր հայրենի երկինքին տակ կը մէկտեղուին 720 սկաուտներ՝ Հ.Մ.Ը.Մ.ի 17 շրջաններէ եւ Իրանի քոյր միութիւններէ:

Երկար ամիսներու նախապատրաստական աշխատանքներու ընթացքին, թէ՛ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը, թէ՛ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը եւ թէ՛ մասնակից շրջանները ճիգ չխնայեցին լաւագոյն ձեւով կազմակերպելու Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտական այս «խրախճանք»ը, որպէսզի առիթը ունենանք բոլորս միասին ապրելու եւ իրականացած տեսնելու Հ.Մ.Ը.Մ.ական իւրաքանչիւր սկաուտի երազը՝ համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումի մասնակցիլ հայրենի հողին վրայ, Արագածի լանջերուն:

Բանակումին բնաբանը՝ «Արագածէն Արարատ, տէրն ենք



մեր դատին» լաւագոյն ձեւով կը ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ.ի ըսկաուտութեան յառաջընթացը դէպի փայլուն ապագայ, շեշտելով ազգային դաստիարակութեան անհրաժեշտութիւնը եւ ցոյց տալով աննկուն կամքը՝ նուաճելու իր գերագոյն նպատակը: Եւ ի՞նչն է աւելի վսեմ նպատակ, քան մեր ժողովուրդին իրաւունքներուն տէր կանգնիլը:

Յաջորդող 10 օրերուն միասնաբար պիտի ապրինք ըսկաուտական, ազգային ու ընկերային կեանք, պիտի ունենանք անմոռանալի օրեր, ու ձեզի հետ պիտի տանիք յիշատակներ, զորս պիտի տարածէք ձեր շրջաններուն, մասնաճիւղերուն ու խումբերուն մէջ՝ յաջորդող սերունդներուն մէջ եւս ցանելով Հ.Մ.Ը.Մ.ականի յատուկ այս երազը եւ զայն իրականացած տեսնելու ձգտումը:

Մենք հոս քով-քովի եկած ենք Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական ոգիով աշխատելու, դաստիարակուելու, զուարճանալու եւ



հարստանալու նորանոր գիտելիքներով եւ մանաւանդ՝ հաստատելու նոր բարեկամութիւններ, որոնք մինչեւ մեր կեանքին վերջը պիտի մնան անքակտելի ու մեզ խրախուսող յիշատակներ:

Համախմբուած ենք նաեւ ապրելու մեր ազգին ու հայրենիքին հօրութիւնը եւ ամրապնդելու պայքարելու մեր կամքը՝ մեր արդար դատի լուծման, յայտարարելու, որ կառչած ենք մեր նահատակներուն սրբազան կտակին, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներուն գծած ուղիին:

Անկասկած, կրտսերագոյն ըսկառուէն ամէնէն չափահաս եղբայրը ճիգ պիտի չինայէ այս նպատակին յաջողութեան համար:

Այսօր, բանակումին բացման արարողութիւնը կը կատարենք ներկայութեամբ 17 շրջաններէ 720 մասնակիցներու, բայց վստահ եմ, որ 10 օրեր ետք, երբ անգամ մը եւս հոս կանգնինք եզրափակիչ արարողութեան համար, արդէն իսկ վերածուած պիտի ըլլանք մէկ ամբողջութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակին ներքեւ միասնաբար պիտի երդուենք Հ.Մ.Ը.Մ.ի



բնաբանով. «Պատուոյս վրայ կ'երդնում ծառայելու ազգիս ու հայրենիքիս եւ աշխատելու հայ ժողովուրդի իրաւունքներու իրագործման համար»:

Բարի վայելում եւ յաջողութիւն մեր բոլորին:

with the complements of

Restaurant Al-Mayass



ՅԱԶՁՈՐԴ ԺԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ

(ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 10-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱՊԵՏ
ԵՂԲ. ՎԱԶԷՆԱՃԱՐԵԱՆԻ ԽՕՍԲԸ՝ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ
ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ԲԻՒՐԱԿԱՆ)

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումի աշխատանքներու պաշտօնական աւարտով, առաջին հերթին շնորհակալական խօսք կեդրոնական վարչութեան, որ իր հայրական հոգածութեամբ հովանաւորեց, կազմակերպեց ու բոլոր պայմանները ստեղծեց բանակումի յաջողութեան համար: Իր օժանդակութեամբ կարելի եղաւ աւարտին հասցնել ամիսներու վրայ երկարող հեւքոտ աշխատանք մը:



Եակի աշխատակազմին ու բոլոր անդամներուն, որոնք բանակումի նախօրեակին եւ ընթացքին ամէն ճիգ ի գործ դրին մեր կեցութեան ու ծրագիրներու յաջողութեան համար: Շնորհակալութիւն բոլոր այն քոյրերուն եւ եղբայրներուն, որոնք քուլիսներու ետին, շուքի մէջ անձայն աշխատելով նպաստեցին պայծառ էջ մը եւս աւելցնելու համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու պատմութեան ստուար հատորին:

Շնորհակալական յատուկ խօսք գործադիր մարմնի քոյրերուն եւ եղբայրներուն, որոնք այս բանակումին շարժակն էին ու աշխատանքի կորիզը: Իրենց նուիրական մօտեցումով կարելի եղաւ ծրագրել, համադրել ու իրականացնել բանակումի բոլոր յայտագիրները:

Շնորհակալական խօսք Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ներկայ եւ նախկին վարչութիւններուն, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի գրասեն-

Ու վերջապէս, շնորհակալութիւն մասնակցող պատուիրակութիւններու խմբապետ-խմբապետուհիներուն եւ անդամներուն, որոնց կարգապահութիւնն ու գիտակցութիւնը ուղղակիօրէն նպաստեց բանակումին յաջողութեան:

Բանակումը խաղաղ ու հանդարտ պտոյտ մը չէր, այլ՝ յոգնեցուցիչ, հեւքով ժրջան աշխատանք պահանջող գործընթաց մը: Սակայն անիկա եզակի էր, որովհետեւ սկաուտա-

կան եւ միութենական ոգին էր տիրապետողը: Այն ոգին, որ յատուկ է միայն Հ.Մ.Ը.Մ.ին, ու այս բանակումը ամրապնդեց այդ կապուածութիւնը մեր մէջ: Մեր միութիւնը այս անգամ եւս առիթը ընծայեց մեզի ապրելու բացառիկ օրեր՝ զօրանալով հայրենի հողին ուժով:

Անձնապէս պատիւ էր ինձի բանակիլ ձեր կողքին ու ձեզի հետ բաժնեկցիլ հայրենիքի հացն ու աղը, հովն ու օդը եւ հպարտանալ Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտ ըլլալու իրողութեամբ:

Այս պահուս վստահ եմ, որ ձեզմէ իւրաքանչիւրը իր միտքին մէջ կ'երգէ «Ցտեսութիւն» երգը, հարց տալով «Արդեօք պէ՞տք է որ բաժնուինք, մեկնինք անվերադարձ»:



Դժբախտաբար, պէտք է որ բաժնուինք: Սակայն իւրաքանչիւրս զինուած նոր առաքելութեամբ, որն է՝ այս բանակումին ստեղծած ոգին ու յիշատակները մասունքի նման տանիլ աշխարհի չորս կողմերը ու ցանել ո՛չ միայն Հ.Մ.Ը.Մ.ական շրջանակներու մէջ, այլ ամէն տեղ ուր հայկական ճրագ կայ՝ շարունակելու Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը:

Սակայն մենք պիտի «չմեկնինք անվերադարձ», այլ պիտի



վերադառնանք ու յաջորդ բանակումին ժամադրուինք Արարատի լանջերուն: Ու չմոռնանք երբեք բանակումի մեր բնաբանը՝ «Արագածէն Արարատ, տէրն ենք մեր դատին»:

Վարձքը կատար ձեր բոլորին եւ մեր ժամադրութիւնը չորս տարի ետք՝ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի բանակումին:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Reservations Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europelhotel.am

ԸՆԴԱՐՉԱԿ ԱՇԽԱՐՀԻ ՓՈՔՐԱՑԱԾ ՄԷԿ ԱՇԽԱՐՀԸ

Սեւան Նազարեան
ՓԱՐԻՉ

Կցկտուր հայերէնով թէ յստակ տողերով լսուող նախադասութիւնը միշտ նոյնն էր՝ «Շա՛տ լաւ է...», «Շատ լաւ ժամանակ կ'անցընենք», «Նոր ընկերներ...», «Բարեկամութիւններ...»:

Ինչի՞ պիտի ծառայէին այսպիսի հաւաքներ, բանակումներ, եթէ աւարտին չունենային նման արտայայտութիւններ:

Համախմբել տարբեր անկիւններու մէջ բնակութիւն հաստատած պատանի-երիտասարդներ եւ ինքնութեան հասկացողութիւնը դարձնել բնական արժէք:

Ընտանիքով Հայաստան այցելած անձին համար Հ.Մ.Ը.Մ-ի բանակում-ճամպորին նոր հայեացք մը տուած էր իրեն՝ վայրի ու միջավայրի տպաւորութեան տակ՝ «Արարատի ու Արագածի միջեւ», միշտ նոյն նեցուկով՝ տարեկից, օտար-հարազատ տղոց հետ:

Տարբեր փորձառութիւն մը կը նկատուէր հայաշատ ու հայութեամբ բաբախող Լիբանանէն հասած պատանիին համար այս բանակումը՝ նոր շրջանակ, նոր ընկերներ, նոյն նպատակին, նոյն գործին համար հաւաքուած:

Անդին, Գանատայի նման տարբեր մասնաճիւղեր ունեցող



շրջանէն հասած սկաուտին համար հետաքրքրական նորութիւն էր գիտնալ, թէ Հարաւային Ամերիկայի մէջ Հ.Մ.Ը.Մ-ը ունի իր ակումբը, կը գործէ «իրենց նման»...:

Եւրոպայի սրտին մէջ ապրող սկաուտին համար եւս նորութիւն էր այդ շրջանին մէջ հայերու նման կազմակերպուած ձեւով գոյութիւնը:

Անշուշտ, հաղորդակցութեան արագութեան այս դարուն կարելի է զարմանալ, թէ ի՞նչպէս կրնան տեղեակ չըլլալ այս բոլորէն, կամ՝ միամիտ նկատել նման արտայայտութիւններ, սակայն փաստօրէն յարաբերութիւնն ու շփումը կը հարթեն յաւելեալ ճիգի բոլոր պահանջները ու փոխանցումները կը դառնան բնական:

Այլ մասնաճիւղի մը մէկ պատասխանատուն, որ այլ մասնաճիւղերու նման, իր շրջանէն ներս չունի հայկականութեան ու յարաբերութիւններու մտահոգութիւններ, աւելի խորացած էր քննելու բանակումին սկաուտական մտահոգութիւնները, համեմատելով անցեալին՝ այժմ բանակողներու միջին տարիքին աւելի փոքր ըլլալը, թուային պատկերին մեծացումը: Երեւոյթներ, որոնք ստեղծած են դժուարութիւններ, սակայն հաւատքը՝ որ Արարատի դիմաց թէ այլուր, Հ.Մ.Ը.Մ-ի որեւէ բանակում իր միջնորդութով, անպայման լաւ արդիւնք պիտի տար, մոռցնել կու տայ ամէն մտահոգութիւն: Ու շնորհիւ նման հանդիպումներու է, որ Հ.Մ.Ը.Մ-ական սկաուտը

ՄԱՀԱԶԳ

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւնը խոր կսկիծով կը գուժէ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի հիմնադիրներէն եւ տարիներու վարչական ու ատենապետ՝

ԵՂԲ. ԿԱՊԻ ՊՈՍՆՈՅԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 18 Օգոստոս 2014-ին, Փարիզի մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Ուրբաթ, 21 Օգոստոս 2014-ին, Փարիզի Ս. Յովհաննէս-Մկրտիչ Տաճարին մէջ:

կը սորվի հանդուրժողականութիւն, յարգել այլ մշակոյթներ, հասկնալ զիրար...

Եւ վերջապէս լեզուի հարցը, որոշ պարագաներու խոչընդոտող կացութիւն առաջ բերած, ընկերական օղակը նեղացուցած, սակայն միւս կողմէ ճիգը՝ ամէն գնով զիրար հասկնալու ու ծանօթանալու, դարձած է մղիչ խթան մը արտայայտուելու «անծանօթ» հայերէնով: Ու մեկնելով անոր ունեցած յարաբերական արժէքէն, նոյնիսկ ոմանց մօտ համոզումի վերածուած է, թէ նման բանակումներ պիտի օգնեն, որ «տուն» դարձին լեզուի անծանօթ տղաք յաւելեալ հետաքրքրութեամբ մօտենան լեզուին ու սորվին զայն:

Եւ անպայման կայ Հայ Դատով մտահոգուած Հ.Մ.Ը.Մ.ականը, թէկուզ տարիքով ո՛չ հասուն, սակայն պահանջատէր իր կեցուածքով թէ՛ «թէեւ Հ.Մ.Ը.Մ.ի խումբով Արարատի դիմաց ենք, բայց տակաւին հեռուէն կը տեսնենք զայն»... փոխանցուած էր պատգամը, զայն նուաճելու երազն ու իղձը...

Այո՛, այս բանակումը իր նպաստը ունեցաւ որքա՛ն մեծ թիւով անդամներ ունեցող մասնաճիւղերուն, որոնք նոր



աւիչ տարին իրենց հետ, բայց մանաւանդ ու նոյնքան մըն ալ փոքրաթիւ անդամներ ունեցող մասնաճիւղերուն, որոնք խանդավառուեցան, «չլացան» զօրքի նման Հ.Մ.Ը.Մ.ի բանակով:

Ընդարձակ աշխարհի փոքրացած մէկ աշխարհը՝ Հ.Մ.Ը.Մ.ի համար համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումը: Հ.Մ.Ը.Մ.ով միացած ու մեծցած աշխարհը:

PINK
Kimberley
AUSTRALIA

PinkKimberley.com.au

Diamonds beyond rare




Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.











































**ԲԱՆԱԿՈՒՄ
2014
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**
Կարպիս Գապասագալեան

**ԲԱՆԱԿՈՒՄԻ
ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ**
Վաչէ Նաճարեան
(Ընդհ. խմբապետ)

Ալին Պաղտասարեան
(Փոխ խմբապետուհի)
Ռոմանոս Պետրոսեան
(Փոխ խմբապետ)
Գեորգ Գասպարեան
(Ընդհանուր հերթապահ)
Յարութ Պաղամեան
(Փոխ ընդհանուր հերթապահ)
Թալին Օրտոդլեան
(Քարտուղարութիւն)
Մանուկ Քեօշկերեան
(Խոհանոցի եւ ներքին
մթերապահութեան հերթապահ)
Թորոս Հալլաճեան
(Սկաուտական ձեռային
աշխատանքներու հերթապահ)
Գեորգ Օհանեան
(Շրջապտոյտներու եւ
անձնակազմերու հերթապահ)

ԱՆՁՆԱԿԱԶՄ
Վերա Տեր Պողոսեան
(Կ. Վարչութեան գործավար)
Լիանա Սարգսեան
(Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի գործավար)
Մարինէ Յարութիւնեան
(Բանակումի քարտուղար)
Ֆուատ Մուրատեան
(Կայք էջի պատխ.)
Յարութ Տէմիրճեան
(Կրպակի պատխ.)
Արտաշէս Մարտիրոսեան
(Լուսանկարիչ)
ՕժԱՆԴԱԿ ԿԱԶՄ
Արման Թորոսեան
Վլադ Բրուտեան
Համլէտ Հախեան
Տարօն Գիւլիւմեան
Սոնա Գայմագամեան
Քրիստ Մարտիրոսեան

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը յատուկ հաղորդագրութեամբ մը նախապէս հանրութեան սեփականութիւնը դարձուցած էր, թէ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը 2011-ին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ին տրամադրած էր նախկին բանակավայրին կից, անհատոյց (մշտական) օգտագործման իրաւունքով մէկ հեկտար հողատարածք մը, ընդարձակելով մինչ այդ օգտագործուող բանակավայրը:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կատարած բանակցութեան շնորհիւ կարելի եղաւ նոր տրամադրուած հողատարածքը սարքել բանակատեղիի ամբողջական յարմարութիւններով, շնորհիւ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Պրն. Սերժ Սարգսեանի եւ «Փիւնիկ» մարդկային պաշարներու հիմնադրամի նախագահ Պրն. Գաբրիէլ Չեմպերճեանի կատարած բարոյական աջակցութեան ու նիւթական իշխանական նուիրատուութեան:

Այժմ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի բանակատեղին իր ունեցած յարմարութիւններով կրնայ հիւրընկալել 1000 սկաուտներ:

Արդ, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումին՝ 31 Յուլիսէն 9 Օգոստոս, միութեան 17 կազմակերպական շրջաններէ մասնակցեցան աւելի քան 700 սկաուտներ:

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Պրն. Սերժ Սարգսեան 22 Օգոստոս 2014-ին այցելեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի բանակավայր, ուր 18 Օգոստոսէն կը կայանար Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի համահայաստանեան բանակումը, որուն կը մասնակցէին աւելի քան 300 սկաուտներ, ինչպէս նաեւ՝ երկրորդ տարին ըլլալով «Խաղաղութեան սուրհանդակներ» նախագիծին մէջ ներառնուած Հայաստանի տարբեր մարզերու ընկերային խնամքի տակ եղող հաստատութիւններէ երեխաներ:

Պրն. Սերժ Սարգսեան իր այցելութեան ժիրին մէջ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին հետ կատարած է բանակավայրի նոր հողատարածքին գործունէութիւնը ազդարարող ցուցատախտակին բացումը, ուր արձանագրուած էին Պրն. Նախագահին ու «Փիւնիկ» հիմնադրամի պատուոյ նախագահին անունները:

Բացման արարողութեան ներկայ գտնուած են Սփիւռքի նախարարը, «Փիւնիկ» հիմնադրամի պատուոյ նախագահը, Կեդրոնական Վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ներկայացուցիչները:

Այս առիթով Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը յիշատակի յուշանուէրներ յանձնած է Պրն. Սերժ Սարգսեանին եւ Պրն. Գաբրիէլ Չեմպերճեանին:

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները միշտ երախտապարտ պիտի մնան իրենց բարերարներուն նկատմամբ:

**Հ.Մ.Ը.Մ.Ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

Պէյրութ, 11 Սեպտեմբեր 2014



ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 10-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՔԱՅԼԵՐԳ

*Խօսք՝ Կարինե Սիսեռեան
Դաշնաւորում՝ Սեդօ Պաղտասարեան*

Կրկներգ Աշխարհի չորս կողմէն եկեր ենք մենք,
Բիրական, Հայաստան մեր հայրենիք:
Անմոռանալի օրեր մենք կ'ապրինք,
Հ.Մ.Ը.Մ., դուն ես մեր ընտանիք:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակում,
Չորս տարի է կը սպասենք անհամբեր,
Հիմա որ հոս ենք, մենք պիտի վայելենք,
Եւ չմոռնանք ամէնքս քոյր-եղբայր ենք:

Կրկներգ Աշխարհի չորս կողմէն եկեր ենք մենք,
Բիրական, Հայաստան մեր հայրենիք:
Անմոռանալի օրեր մենք կ'ապրինք,
Հ.Մ.Ը.Մ., դուն ես մեր ընտանիք:

Արագածէն դէպի Արարատ,
Տէրն ենք մեր դատին, մինչեւ վերջ:
Պարտաճանաչութեամբ կը պայքարինք,
Հայրենիք, միշտ հոս ենք քու կողքիդ:

Կրկներգ Աշխարհի չորս կողմէն եկեր ենք մենք,
Բիրական, Հայաստան մեր հայրենիք:
Անմոռանալի օրեր մենք կ'ապրինք,
Հ.Մ.Ը.Մ., դուն ես մեր ընտանիք:



ԲԱՆԱԿՈՒՄ 2014 ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Նանէ Մանասեան
Չոյա Գրիգորեան
Անուշաւան Հայրապետեան
Վարդան Միրումեան
Անի Սարգսեան
Երանուհի Խլղաթեան
Անուշիկ Ասատրեան
Ռիմա Եղիազարեան
Էդգար Իսկանտարեան
Սիրեկան Այվազեան
Գոռ Սարգսեան
Դաւիթ Բարսեղեան
Սարգիս Վելիխանեան
Էրիկ Թովմասեանց
Գարիկ Քոչարեան
Շուշան Մելիքեան
Նարեկ Պետրոսեան
Գառնի Շիրվանեան
Դաւիթ Փանոսեան
Ալպէրթ Թադեւոսեան
Դաւիթ Հայրապետեան
Ալպէրթ Գեորգեան
Վարդան Վարդանեան

Հ.Մ.Ը.Մ. ԱԼՄԵԼՕ
Ժագ Մատաղուտողեան
Անիթա Կորկիսեան
Նանէ Սերոյեան
Կարօ Վահանեան
Նայիրի Ասլանեան
Յակոբ Կորկիսեան
Յակոբ Գասպարեան
Անտրէ Մատաղուտողեան
Վիգէն Օհաննէսեան
Ազատ Պօղոսեան
Սոնիա Խաչատուրեան
Փաթիլ Պոզէնցեան

Հ.Մ.Ը.Մ. ԱՄՄԱՆ
Դալար Խանոյեան
Աշոտ Խանոյեան
Յարութ Մխճեան
Վերոնիքա Մխճեան
Քրիսթէլ Անտոնեան
Ժեռարտ-Մոս Անտոնեան
Ժիրայր Քահրէճեան
Հրաչ Մխճեան
Ռիթա Մարգարեան
Թալին Մարգարեան



**ԲԱՆԱԿՈՒՄ
2014
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**

Դալար Պալեան
Ալին Պալեան
Ժանէթա Շըմբլեան
Գործ Ինքապապեան

Հ.Մ.Ը.Մ. ԱԲՍՏՐԱԼԻԱ
Յակոբ Տէր Թադէոսեան
Սեդա Տէր Թադէոսեան
Ռոժիքա Չոփուրեան
Վերժինիա Քէշիշեան
Յասմիկ Տէր Թադէոսեան
Միքայէլ Չոփուրեան
Նաթաշա Վարեան
Իգապէլ Վահրատեան
Ռէպէթա Ներսէսեան
Մոնիք Մանուկեան
Գայլար Պօղոսեան
Գարուն Պօղոսեան
Փաթրիք Գորուշեան
Ալէքսիս Սարա Տիտաղի
Միքայէլ Գոլոբոսեան
Գրիգոր Գոլոբոսեան
Գալէն Թաշճեան
Թալին Կարինէ Պարտաքճեան
Կարէն Գորուշեան
Տարօն Գալլօղլեան

Հ.Մ.Ը.Մ. ՊԱՂՏԱՏ
Անիթա Եղիազարեան
Արա Բերեմեան
Արա Ենովիքեան
Հիլտա Սահակեան
Մարալ Իսսան
Մարալ Ենովիքեան
Մարիամ Եղիազարեան
Մասիս Աւետիսեան
Նարինէ Սահակեան
Սահակ Քերմենիքեան
Սաթիկ Օհաննէսեան
Շանթ Սարգիսեան
Վարդան Սարգիսեան
Զոհրապ Պետրոսեան

Հ.Մ.Ը.Մ. ԳԱՆԱՏԱ
Ալիսիա Աղազարեան
Դալար Ակոբեան
Արա Անասալ
Դալար Անասալ
Ալին Անթէպի





ԲԱՆԱԿՈՒՄ
2014
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Լեւոն Արապեան
 Լիսա Արապեան
 Ուիլիամ Արապեան
 Կասիա Արմութլու
 Արէն Պապիկեան
 Սեւակ Պապիկեան
 Սարիթա Պամպուրեան
 Քրիսթոֆըր Պասմաճեան
 Մաթիու Պասմաճեան
 Անտրու Պելջեր
 Անթոնի Պելջեր
 Սարհատ Պէրպէրեան
 Շանթ Շահինեան
 Զոհրապ Շահինեան
 Գարին Գոլասուրտո
 Ալէքս Տաղլեան
 Արէն Տաղլեան
 Արի Տաղլեան
 Դաւիթ Տիւանշեան
 Տարէն Էկոյեան
 Լոռի Էլակոզ
 Մելիսա Յարաթիւնեան
 Րաֆֆի Յարպոյեան
 Գրիգոր Յարութիւնեան
 Կարին Իմամէճեան
 Անի Չուխաճեան
 Արաի Գաշաթուրեան
 Տարէն Գաֆաֆեան
 Գործ Գալլօղեան
 Լեւոն Կարապետեան
 Արեգ Քեօհնէլեան
 Մելանի Մանտալեան
 Էմիլի Մարկորեան
 Գնեսիքա Մարկորեան
 Իսապէլ Մաթոսեան
 Մարիա Մաթոսեան
 Անի Մելէքեան
 Սեւան Մելէքեան
 Արագ Նիկողոսեան
 Յակոբ Նիկողոսեան
 Լիզա Նիկողոսեան
 Գէորգ Օհաննէս
 Անթոնի Օհաննէսեան
 Անիք Փլեզանս
 Գարին Փլեզանս
 Ալին Թաշճեան
 Մելանի Թաշճեան
 Պարոյր Թաշճեան
 Սերոբ Թաշճեան



ԲՃՆԱԿՈՒՄ
2014
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Նանօր Թաշճեան
Րաֆֆի Դաւիթեան
Ժագ Շարֆաճեան
Նուպար Թեճիրեան
Նարե-Կասիա Թոփուզեան
Աւետիս Թիւֆէնքճեան
Արի-Մայք Վարժապետեան
Լեւակ Ոսկիեան
Վազգէն Ոսկիեան
Արա Արմինաք
Ատրինէ Արթին
Ալիք Աշրգեան
Վարանդ Աշրգեան
Արմէն Պալեօզեան
Դալար Պալեօզեան
Ճորճ Պիուս
Կարին Պոյաճեան
Նարեկ Պոյաճեան
Տարօն Տերտրեան
Արամ Տէր Յարութիւնեան
Արագ Տէր Օհան
Մարալ Տէր Օհան
Նարե Էղջու
Անուշ Դորղորեան
Նանար Դորղորեան
Միեր Գարաճեան
Ալին Քարկոցեան
Արփի Գաթըրճեան
Ալէքսա Մարկորեան
Նաթալի Մաթիաս
Մեղրի Մուսախանեան
Ռուպինա Սարգիսեան
Յովսէփ Չամիչեան
Արի Թէլեան
Սիրուն Թէլեան
Վանի Եագուպեան
Վահան Զարասեան
Լեւոն Սարմազեան
Սարին Սարմազեան
Նայիրի Շաւարշեան
Փամէլա Անտոնեան
Յովիկ Ճերճեան
Ժան-Յակոբ Չուխաճեան
Լոռի Չուխաճեան
Ալէքսանտրա Չուրիքեան
Մասիս Գէորգեան

Հ.Մ.Ը.Մ. ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. Ն.
Ալէքս Ուրֆալեան





ԲԱՆԱԿՈՒՄ
2014
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Ալեքս Դալիթեան
Արա Մարկոսեան
Արին Քալանթարի
Պարգեւ Չաղլասեան
Էլիզապէթ Սանթուրեան
Կարօ Պազարպաշեան
Յովիկ Մարկոսեան
Այտա Պարսումեան
Իսկենտր Թէնէքէճեան
Գաթիա Պէճաքեան
Լոռի Մուրատեան
Լիւսի Փանոյեան
Մանուկ Մարտիրոսեան
Մարիանա Ջանիկեան
Մարի Պազարպաշեան
Մեղրի Տէր Վարդանեան
Նայիրի Մանճիկեան
Նինա Ոսպիկեան
Փաթիլ Բարսեղեան
Ռինա Բանեան
Ռուպինա Ոսպիկեան
Սեւակ Ապոյեան
Թալին Սաղըրեան
Թալին Քալանթարի
Թինա Պարսումեան
Վարագ Մուրատեան
Վազգէն Քէպապճեան
Սոնիա Ուրֆալեան
Շանթ ճինտոյեան
Նիքոլին Խոլամեան
Վանեսա Խոլամեան
Մարի Ջաքարեան
Անդրանիկ Նիկողոսեան
Հելանի Նիկողոսեան
Նաթալի Նիկողոսեան
Նաթալի Փափագեան
Դալիթ Փափագեան
Վիգէն Սազեան
Արա Դալարեան
Սկօ Դալարեան
Սահակ Ջաքարեան
Սոֆիա Ջաքարեան
Շանթ Գեորգեան
Անահիտ Քէշիշեան
Անթընի Տաուտ
Արա Սիմոնեան
Սելինա Պոզոյեան
Գեորգ Արզարեան
Լենա Տաուտ



**ԲԱՆԱԿՈՒՄ
2014
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**

Մարի Աբգարեան
Նայիրի Գաբրիէլեան
Սամուէլ Սամուէլեան
Սեւակ Սունդուկեան
Թամար Ասայեան
Թամար Սամուէլեան
Գարին Ճեպէնեան
Ալիսիա Յանտեան
Արամ Մուրատեան
Կարին Մուրատեան
Գէորգ Դրամկոչեան
Մասիս Մարտիրոսեան
Միւր Կարդանեան
Յոլին Գարաբեղեան
Ադամ Աբչեան
Ալիսա Պէյլի
Անի Գոմեղլա
Կարո Թաշեան
Ճորճ Տոնոյեան
Ճիւղանի Աբչեան
Յակոբ Թարաքեան
Յարութ Թաշեան
Այտա Գրիգորեան
Լենա Մինասեան
Նարինէ Թարաքեան
Փօլ Մինասեան
Րաֆֆի Ռշտունի
Սիրան Գրիգորեան
Թալին Տոնոյեան
Թալին Թարաքեան
Սմբատ Դրամկոչեան
Սօսէ Պէօճէբեան
Անի Աղկէկեան
Անի Դիքոյեան
Անդո Չաքմաքճեան
Էրիք Ալահվերտեան
Կարինէ Աչիքեան
Կարո ճարեան
Հրակ Թանաշեան
Քրիսթին Արապեան
Մարիա Աղկէկեան
Նանար Քէօրքիւնեան
Նաթալի ճարեան
Սագօ Տայեան
Սերժ ճարեան
Սեւակ ճարեան
Շանթ ճարեան
Թամար Տայեան
Յոլինէ Աչիքեան



**ԲԱՆԱԿՈՒՄ
2014
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**

Կալի Չաքմաքճեան

Հ.Ս.Ը.Մ. ՖՐԱՆՍ
Պօղոս Մահալուպեան
Մաքսիմ Աճէմեան
Դուին Քիւրքճեան
Սիփան Քէօրօղլեան
Թադէ Անդրէասեան
Գրիգոր Պիչէր
Արմէն Թաս
Րաֆֆի Սիմոնեան
Կարինէ Սիսեռեան
Նայիրի Սիսեռեան
Նարինէ Մագարճեան
Նենսի Գոլոյեան
Քամիյ Տատայեան
Կալի Գապէլեան
Անի Քիւրքճեան
Տաթև Գրիգորեան
Վիգի Կիրակոսեան
Սելինէ Կիրակոսեան
Անի Ժամկոչեան
Կասիա Վէքիլեան
Գայիանէ Արսլանօղլու
Էմմա Պարպարեան
Մանէ Անդրէասեան
Ռիթա Սիմոնեան

Հ.Ս.Ը.Մ. ՅՈՒՆԱՍՏԱՆ
Եղիշէ Շահբազեան
Մարի Տանկուրեան
Մարիամ Չիմարեան
Անի Տէր Կարապետեան
Գոհար Չիմարեան
Անահիտ Սրապեան
Ալին Այվազեան
Թալին Տէր Կարապետեան
Մարիլիք Ժամկոչեան
Տիմիթրիս-Իրանիս
Գասարճեան

Հ.Ս.Ը.Մ. ՀԱՐԱԲԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ
Հայրենիք Սանթուրեան
Մարի Մարինա Եօրճեան
Ռոմինա Գոլյունճեան
Միսաք Տէրտէրեան
Վալենթինա Պենկլեան
Լարիսա Պարպարեան
Անտրէա Սօսէ Եօրճեան



ԲԱՆԱԿՈՒՄ
2014
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Ալեխո Մոսեան
Նիքոլ Պարպարեան
Սարգիս Փանոսեան
Նազարեթ Լեոնարտո
Դանիելեան
Ատրինե Տերտերեան
Միքայել Գեորգ Նալպանտեան
Մարիանո Տոնիկեան
Արթին Սանկուելտոլչի
Փափազեան
Խաւիեր Իկնասիո Սալոնիա
Նիքոլ Աւագեան
Յակոբ Թուրուշեան
Ասատուր Թորոսեան
Փիլար Սաֆարեան
Րաֆֆի Սամանձեան
Կարինե Չորպանեան
Մելինե Օհանեան
Սոֆիա Զանիքեան
Մաուրո Արմեն Նաքաչեան
Փաուլա Անտրեա
Տիրատուրեան
Կարինե Արաքսի Մովսէսեան
Մելինա Անուշ Տոլմաձեան
Ալեքս Վանիկ Սամանձեան
Անուշ Տէր Յակոբեան
Մարալ Ալին Մովսէսեան
Պելեն Կոստանեան
Արամ Անձելօ Ռիզեան
Լուրտես Մարիսոլ
Թիւֆէնկձեան
Մարիա Էմիլիա Յիւպիլեան
Ֆապրիսիո Աձեմեան
Ակուսթին Անալեան

Յ.Մ.Ը.Մ.- Յ.Ա.Ս.Կ.
Սոֆիա Ամիրեան
Արմենուհի Յայրապետեան
Ռուզան Իսկանտարեան
Իզապելլա Յամբարձումեան
Յայկ Սարգսեան
Արամ Աբրահամեան
Աշոտ Իսկանտարեան
Յայկ Մկրտչեան
Յայկ Աղաբէկեան
Լիլիա Աւետիսեան
Յասմինկ Սարգսեան
Նարե Խլղաթեան
Աննա Սարաջեան



ԲԱՆԱԿՈՒՄ
2014
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Գարեգին Սարաջեան
Թալին Սաղտասարեան
Նարինե Դոլմօղլեան
Սեւակ Նազարեան
Դաւիթ Սինասեան
Լուսինե Կզըլեան
Կարպիս Կետիկեան
Խորեն Նազարեան
Րաֆֆի Բըժեան
Գեորգ Նաղարեան
Արմինե Սաւչենկօ
Մանե Յարութիւնեան
Աքսաննա Յայրապետեան
Յասմինկ Մանուկեան
Դաւիթ Սիմոնեան
Ալլաթր Քաբայեան
Սարգիս Քիրազեան
Նարինե Քիրազեան
Նանօր Քեսէեան
Նայիրի Քեսէեան
Մարլէն Քեսէեան
Ժիրայր Ճիւբէլեան
Ժենի Թոփալաքեան
Սեդրի Քվըրեան
Պետրոս Տաւուտեան
Լորա Տոնոյեան
Վիզեն Յովհաննիսեան
Սեւադա Քէշիշ-Ղուկասեան
Այտա Միրզախանեան
Ալին Պոյաձեան
Արթիւր Ամիրեան
Սիմոն Ծատուրեան
Անահիտ Պետրոսեան
Արմեն Սարգսեան
Էդիտա Պօղոսեան
Էմիլիա Յարութիւնեան
Յարութիւն Յարութիւնեան
Անոյշ Յամբարձումեան
Ալվինա Գրիգորեան

ԻՐԱՆ
Սիփան Քարամեան
Նարբէ Քէշիշեան
Սեւակ Ֆաթիի
Լէօ Տէր Աւաննէսեան
Արեն Քարամեան
Էդուին Շահվերդեան
Արփի Ղազարեան
Միրօ Ստեփանեան



ԲԱՆԱԿՈՒՄ
2014
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Մենուա Անդրեասեան
Էդուին Աղաբեկեան
Սարբինա Բութաղեան
Արմիդա Հայրապետեան
Մինելի Սարգսեան
Սիւնէ Դանիէլեան
Միլեն Բարիջանեան
Անի Ջաքարեան
Սիւնէ Ֆարմանեան
Նարէ Խալոյեան
Արփինէ Յովսէփեան
Նարէ Դուկասեան
Մանաշիտ Մեհրաբեան
Մենուա Աբեղեան
Լիլիան Գալստեան
Էմիլ Մասեհեան
Հարմիկ Նաւասարդեան
Նայիրի Յարութիւնեան
Անգիմէ Պատալեան
Արին Սկրտիչեան
Գայիանէ Տէր Աւաննէսեան
Էմիլն Թահմասեան
Նայիրի Շիրանեան
Նարէ Քէշիշեան
Սերլի Սարգսեան
Մոնթ Սիմիկ
Վանէ Մուհմուդեան
Արուին Եսայեան
Շաղիկ Գալստեան
Սեւան Սարգարեան
Աղենա Բարխուրդարեան
Սեւան Իսաղուլեան
Անտրէ Նաւասարդեան
Մոնթ Մովսիսեան
Վարազա Աւաննէսեան
Անասիս Մովսիսեան
Նուշէ Քէշիշեան
Սիլվա Յովսէփեան
Ատրինէ Թաճարեան
Անտրէ Յովսէփեան
Սեւակ Պետրոսեան
Արգիշտ Մանսուրեան
Հերմինէ Թորոսեան
Մանիա Դուկասեան
Դերենիկ Թորոսեան
Նարէկ Սիրջանեան
Թանգիկ Սիրգախանեան
Սիփան Անդրեասեան
Նարինէ Քէշիշեան





**ԲԱՆԱԿՈՒՄ
2014
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**

Արփիար Դաւթեան

Հ.Մ.Ը.Մ. ՔՈՒԷՅԹ
Աւագ Կարապետեան
Ալիք Պէրպէրեան
Վանիա Մինասեան
Գէորգ Նալճեան
Սիրուն Սորա
Չեփիւռ Քեօշկերեան
Ալպէրթ Թորոս
Սարգիս Թաթարեան
Գոհար Քէթնճեան
Ներսէս Մելքոնեան
Գէորգ Յովակիմեան
Յուլիա Գալայճեան
Յակոբ Պայրամեան
Յակոբ Ժամկոչեան
Վարդան ճուլիայեան
Ովսաննա Մարաշլեան
Մոսիկ Գազէլեան
Ժաք Եգեկիլ
Վարդ Յովակիմեան

Հ.Մ.Ը.Մ. ԼԻԲԱՆԱՆ
Ժանօ Քէչէճեան
Արտա Չէյթունլեան
Կարէն Աբրահամեան
Շողեր Թասլաքեան
Ալիք Տէր Պետրոսեան
Թամար Քէշիշեան
Աւօ Մարտիրոսեան
Շահէն Խանօ
Նազօ Քէշիշեան
Մեղեղի Սնապեան
Հրակ Մետրոպեան
Ալիք Մետրոպեան
Րաֆֆի Քէչէճեան
Նարօտ Քէչէպաշեան
Շանթ Գազանճեան
Արզնի Արսլանեան
ճորճ Արսլանեան
Սիիրան Մուրատեան
Սառա Խուստէքեան
Յովիկ Սասունեան
Լոռի Սարգիսեան
Սթիւ Աշգարեան
Հայկ Աւետիս
Նարօտ Նորամանեան
Նանէ Սէմէրճեան



**ԲԱՆԱԿՈՒՄ
2014
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**

Սինթիա Պայրագտարեան
Զաւէն Տէր Պետրոսեան
Մայք Արապաղեան
Փաթրիք Թովմասեան
Արի Կարպուշեան
Շաղիկ Տէր Պետրոսեան
Ալիք Գանտահարեան
Նարինէ Փօլատեան
Արին Պուչաքճեան
Բալիկ Կարպուշեան
Յակոբ Մարըլեան
Գէորգ Մարըլեան
Սինթիա Թորիկեան
Ռազմիկ Տօնիկեան
Կալի Խիւտավերտեան
Արլին Խուրի
Քրիսթել Յովսէփեան
Նանօր Յամամճեան
Սանան Խաչերեան
Յակոբ Չաթալեան
Ծաի Պիլալեան
Սեպուհ Տօնիկեան
Մեղրի Գազանճեան
Աննա Մարիա Տէմիրճեան
Քրիստեան Գապագեան
Նելլա Ժըհայմ
Վանա Ծենանեան
Գուրգէն Փափագեան
Անի Սարեան
Քրիստ Յովսէփեան
Սերժ Ղարիպեան
Բիւզանդ Մկրտիչեան
Սագօ Ջոպոյեան
Սեւակ Պէքրէճեան
Վանիկ Գասարճեան
Սերժ Մանուկեան
Վանա Չոլաքեան
Ռիթա Անտոնեան
Անժելա Տաղլեան
Սարին Պերպլեան
Նարին Աղամեան
Կարինէ Շատոյեան
Ռիթա Սէֆերեան
Էա Ղազարեան
Բալիկ Յապոյեան
Քրիսթել Արթինեան
Կարէն Ազգարեան
Յովիկ Աղամեան
Քրիստ Արթինեան



**ԲԱՆԱԿՈՒՄ
2014
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**

Ճոյս Մալտոսեան
Կասիա Էճիտեան
Կարէն Անտոնեան
Շանթ Լազիսեան
Վարանդ Քեօշեան
Վարդ Ջէյթլեան
Դրօ Ջէյթլեան
Գառնի Քէնտիրճեան
Սիմոն Տումանեան
Տաիդ Աղամեան
Գարլա Քէնտիրճեան

Հ.Մ.Ը.Ս. ԼՈՆՏՈՆ
Վենելցիա Աբրահամեան
Թամար Ապրամեան
Անտրէ Ասատրեան
Վարագ Աթանոսեան
Հոդրիք Աւագեան
Շահում Ավեջան
Ալէքս Աւագեան
Աննա Աւագեան
Նարեկ Բաբայեան
Սեւանայ Բաբայեան
Սալբի Բէշիրեան
Արի Պօղոսեան
Վահէ Պօղոսեան
Անի Ֆանուսի
Ստեփան Գասպարեան
Ալէքս Ղափանցեան
Հրաչ Ղափանցեան
Ռաֆայէլ Կրեկորեան
Արտա Յալլաճեան
Հերոս Ջոջաղայեան
Յովհաննէս Խորոզեան
Խաչեր Խորոզեան
Մարիա Խորոզեան
Ալիս Գոլանճեան
Գարլօ Մարդոյեան
Նարբէ Սինասեան
Յակոբ Մուրատեան
Գոռ Նազարեան
Անայիս Օհանեան
Թինա Օհանեան
Քրիսթին Սահակեան
Քաթրին Սայաղեան
Արփի Ստեփանեան
Այգ Ստեփանեան
Նոյենի Ստեփան-Սարգիսեան
Ֆրէդի Թադէուս



ԲԱՆԱԿՈՒՄ
2014
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Ալեքսանտր Եղիազարեան
Անտրէ Եղիազարեան
Աննա Ջէյնալի
Կարին Օհանեան
Նարինէ Սիմոնեան

ԱՐԵՄՏԵԱՆ Մ. ՆԱՅԱՆՉՆԵՐ

Թալին Հինտոյեան
Նայիրի Մանուկեան
Շարլին Գեօզալեան
Դալար Գալուստեան
Սօսի Պէքարեան
Արտաշէս Ղազարեան
Կարինէ Գնտոյեան
Դալար Տարագճեան
Լիզա Փանոսեան
Սեւան Գալայճեան
Թինա Խանլեան
Արէնի Շահինեան
Լարա Փանոսեան
Նարեկ Մեծաչեան
Պետրոս Պապիկեան
Նարեկ Ղազարեան
Քլոտիա Լէիսթ
Թամար Ղարիպեան
Շահան Աթմաճեան
Լիա Տէր Աբրահամեան
Արին Ղարիպեան
Անտրէա Ղազարեան
Րաֆֆի Սամուրջաչեան
Թամար Տէյրոմէնճեան
Շանթ Քիլեճեան
Ջեփիւռ Աւաննէսեան
Վարագ Պոսնոյեան
Նայիրի Պաղտասարեան
Արմէն Ղազարեան
Սեւակ Լէոն
Լոռի Պէրպէրեան
Գարին Ենիգոմչեան
Արմէն Սաֆարեան
Ռիթա Ղուկասեան
Մայքըլ Սրուրեան
Անի Ղազարեան
Ալէք Սողոմոնեան
Քրիստափոր Ալլահվերտեան
Նայիրի Վրթանէսեան
Նարէ Բանդարեան
Անտրէյ Սաղեան
Սարին Լէոն





**ԲԱՆԱԿՈՒՄ
2014
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**

ճուլի Աւետիսեան
Փաթրիք Ալլահվերտեան
Անոյշ Ղազարեան
Դրօ Նալպանտեան
Ռաբէլ Ղուկասեան
Ռիթա Խաչիկեան
Նարեկ Տէր Պետրոսեան
Աննա Խեչումեան
Արմօ Տէր Բարսեղեան
Քրիստիան Փիրիմ
Թենի Աւաննեսեան
Շարես Շահբազեան
Դալար Փայլունեան
Ալին Աբրահամեան
Փաթրիք Մանուկի
Ալինա Մինասեան
Մարալ Յինտոյեան
Նատին Թահանեան
Անտրոյ Յայկ Տարագճեան
Ռազմիկ Մաքասճեան
Թինա Խանլեան
Թալին Գեորգեան
Քաթիա Գեորգեան
Դիոն Թահմասեան
Սեւանայ Բաղդասարեան
Մարթին Անսուրեան
Անի Օվաննէսեան
Մարալ Պապիկեան
Թաթիանա Փիրիմ
Արեգ Յարթնեան
Գալիա Պետրոսեան
Թառա Փիրումեան
Վահէ Խաչատուրեան
Իզապէլ Եօլմէտքեան
Մարսէյ Մելքումեան
Կարէն Յաբէշեան
Արամ Բալայեան
Քրիսթինա Սաֆարեան
Սարգիս Մինոյեան
Շանթ Մեղիխանի
Քրիսթինէ Դաշդեմիրեան
Ալեքսա Սվազլեան
Յայկ Պաղտասարեան
Րաֆֆի Յաւաթեան
Դալար Քիլինեան
Դերիկ Մանսուրեան
Սթիւ Իսախանեան
Թալին Յանուն
Արէն Աղաբաբեան



**ԲԱՆԱԿՈՒՄ
2014
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**

Ալեն Սիրզայեան
Ուիլիամ Պետրոսեան
Էլլա Մխիթարեան
Արմեն Աճեմեան
Գրիգոր Քապչանեան
Քրիսթիան Քասսապ
Նոէլ Անտոնեան
Շանթ Համբարչեան
Նաթալի Պապիկեան
Յակոբ Սարգիս
Գեորգ Նալպանտեան
Դանիէլ Շահգալդեանս
Գրիգոր Աթաշեան
Շանթ Սիրզայեան
Արին Բանդարեան
Ալին Աբրահամեան
Արգին Դիլանչեան
Իվանա Գրիգորեան
Նաթալին Հինտոյեան
Մարիա Սարգիսեան
Թաթիանա Աբրահամեան

Հ.Մ.Ը.Մ. ԵՐՈՒՍԱՂԵՄ
Աթո Սահակեան
Յակոբ Սեւզադեան
Յակոբ Սահակեան
Գրիգոր Սահակեան
Դաւիթ Սահակեան
Գարին Սահակեան
Ժագլին Սանտրունի
Անի Սեւզադեան
Սուէ Գրիգորեան
Լիլիթ Սահակեան
Թէնի Առաքելեան
Նանօր Առաքելեան
Գարին Եագուպեան
Նայիրի Եագուպեան
Կարինէ Հինտոյեան
Ազնիւ Հինտոյեան
Անի Շահինեան
Ֆրանք Թումէ Սարգիսեան
Մայրըլ Թումէ Սարգիսեան
Մատթէոս Բանոյեան
Եոհան Բանոյեան
Նաթալի Բանոյեան
Նաթալի Մաթոսեան
Նուարդ Սողոմոնեան



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը քառամեայ նստաշրջանի (2011-2015) իր երրորդ լիազումար նիստերը գումարեց 3-5 Օգոստոս 2014-ին, Երեւանի մէջ:

Կեդրոնական Վարչութիւնը նախ եւ առաջ անդրադարձաւ երկրորդ լիազումարով տրուած որոշումներու գործադրութեան եւ հետապնդելի կարգ մը գործունէութիւններուն:

Այս, կարելոր նկատելով միութեան կազմակերպական հոլովոյթը, լսեց շրջաններու եւ մեկուսի շրջաններու մասին ամփոփ զեկուցում մը եւ, հիմնուելով կարգ մը շրջաններու դիմագրաւած դժուարութիւններուն վրայ, յետ քննարկման կատարեց եզրայանգումներ՝ ամենէն կարճ ժամանակամիջոցին ապահովելու անոնց բարուք լուծումը:

Կեդրոնական Վարչութիւնը հանգամանօրէն անդրադարձաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերուն, որոնք երկրորդ անգամ ըլլալով կայացած էին Հայաստանի մէջ, 2013-ին: Քննարկելէ ետք կեդրոնական մարզական յանձնախումբին տեղեկագիրը եւ նկատի ունենալով ձեռնարկին արձանագրած անդրադարձն ու յաջողութիւնները, որոշեց համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը ասկէ ետք նախընտրաբար կազմակերպել Հայաստանի մէջ:

Կեդրոնական Վարչութիւնը կարելորութեամբ ընդգծեց կեդրոնական սկաուտական յանձնախումբին իրականացուցած սկաուտական դաստիարակչական ծրագիրները, զորս կարելի եղած էր գործադրել խորհրդաժողովի միջոցով, ցամաքամասային դրութեամբ, խմբապետներու վերաորակաւորման դասընթացքով եւ բարձրաստիճան խմբապետներու յատուկ «Արարատեան» կարգով:

Կեդրոնական Վարչութիւնը կանգ առաւ նաեւ աշխատանքներուն վրայ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումին, որ տեղի ունեցաւ 31 Յուլիսէն 9 Օգոստոս 2014, Բիւրականի մէջ: Վարչութիւնը գնահատեց բանակատեղիի հողատարածքին ընդարձակումը եւ շինարարական աշխատանքները, որոնց մեծապէս սատար հանդիսացած էին հայրենի պետութիւնն ու «Փիւնիկ» մարդկային պաշարներու հիմնադրամը:

Կեդրոնական Վարչութիւնը որոշեց «Միհրան Շիմշիրեան սկաուտական ֆոնտ»-ին գումարը յատկացնել սկաուտական կարգերու եօթը գիրքերու համացանցի վրայ տեղադրման ծրագիրին՝ զանոնք ելեկտրոնային տարբերակի վերածելէ ետք:

Կազմը այս քառամեակին եւս յառաջ մղեց ռազմավարական ծրագիրի գործնականացման հոլովոյթը՝ առիթը ստեղծելով, որ շրջաններու մէջ կիրարկուի ըստ կարելւոյն հանգրուանային դրութիւնը, միշտ յառաջընթաց զարգացում ապահովելով:

Կեդրոնական Վարչութիւնը առաջադրեց նաեւ



11-րդ Պատգամաւորական ժողովին ներկայացնել ռազմավարական ծրագիրի յանձնախումբին մշակած յաւելուած կանոնագիրը, որ առաւել եւս պիտի դիրացնէ անոր գործադրութիւնը:

Կարելոր նկատելով Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման նախաձեռնութիւնները, Կեդրոնական Վարչութիւնը որոշեց ամենուրեք խիտ շարքերով գործօն եւ աշխոյժ մասնակցութիւն բերել, ինչպէս նաեւ գաղութներուն մէջ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ կազմակերպել յաւուր պատշաճի ձեռնարկներ:

Նկատի ունենալով 2015-ին կայանալիք համահայկական մարզախաղերը, որոնք պիտի կատարուին Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի ձեռնարկներուն ծիրին մէջ, Կեդրոնական Վարչութիւնը շրջաններու բոլոր մարզախումբերուն պիտի թելադրէ առաւելագոյն թիւերով մասնակցիլ մարզախաղերուն:

Կեդրոնական վարչութիւնը «Մարզիկ» պաշտօնաթերթի բովանդակութիւնը եւ անոր կարելորութիւնը գնահատելով՝ անդրադարձաւ նաեւ անոր դիմագրաւած նիւթական լուրջ դժուարութիւններուն եւ առաջադրեց քննական յատուկ թղթածրարով մը ներկայանալ 11-րդ Պատգամաւորական ժողովին:

Կեդրոնական Վարչութիւնը ի տես միութեան աշխարհատարած աշխատանքներուն, կը հաստատէ, որ անոնք վճռուած են յաջողութեամբ պսակուիլ, հակառակ ամէն տեսակ մարտահրաւերներուն, շնորհիւ միութեան ներշնչած ոգիին ու կամքին եւ անոր նուիրական նշանաբանին՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»-ին:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Երեւան, 11 Օգոստոս 2014

